Կամ կառավարության կողմից Աժ ներկայացված հաշվարկ, թե ինչ նպատակներով է Հայաստանին անհրաժեշտ լրացուցիչ փոխառու միջոցներ, ինչու բյուջետային միջոցները չեն բավարարում: Ինձ մոտ կան բավական լուրջ կասկածներ առ այն, որ այն նախընտրական խոստումները, որոնք տրվել են, բյուջետային ռեսուրսների հետ անհամատեղելի են:

Կարդացեք՝ էջ 4

Ես չեմ ներկայացնի Ձեր գործած ոճիրները, որովհետեւ դրանք անսպառ են, բազում ու բազմաբնույթ: Դրանք ուղղված են ոչ միայն հայի, հայկականության դեմ, այլեւ ընդհանրապես մարդ արարածի ու մարդկության դեմ: Ես, պարոն, իբրեւ մարդ, զարհուրում եմ այն ճակատագրից, որ սպասվում է Ձեզ, որն ինքներդ եք ստեղծել Ձեզ համար:

Կարդացեք՝ էջ 7

Ինչու է այդքան կարեւոր, որ վերընտրվի երրորդ անգամ: Գուցե Տիգրանաշենն էլ է «դժգույն», ինչպես Շուշին: Ի՞նչ երաշխիք, որ վաղը դժգույն չի հայտարարելու Սյունիքը, Գեղարքունիքը ... Ընթերցող, լավ մտածիր մինչեւ հունիսի 7-ը՝ քեզ պե՞տք է «սրտիկ անող» իշխանություն, որի օրոք միայն միակողմանի զիջումներ են եղել:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 86 (4221), 30 մայիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Չնայած Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը «խաղաղության» թեման հաղթաթուղթ են դարձրել իրենց ձեռքին եւ շարունակ խոսում են նաեւ սահմանազատման մասին ու հավաստիացնում, որ դրա արդյունքում ադրբեջանական զինուժը դուրս է գալու Հայաստանի սուվերեն տարածքի այն 200 քառակուսի կիլոմետրից, որտեղ արդեն 4 տարի է՝ նստած է եւ անգամ դիրքեր է կառուցում, գործող զինվորականները խոսում են այն մասին, որ դա անհնարին է լինելու, եթե Հայաստանը չդիմի ուժային միջոցով նրանց դուրս մղելու քայլին: Բանն այն է, որ ադրբեջանցիները որեւէ կերպ չեն համաձայնում 2021-2022 թթ. օկուպացրած տարածքներից դուրս գալ անգամ սահմանազատումից հետո: Գաղտնիք չէ, որ նրանք հիմնականում ռազմավարական նշանակության տարածքներ են զավթել եւ հիմա էլ տարածքային նորանոր պահանջներ են ներկայացնում մեզ: Մեր զրուցակցի խոսքով՝ եթե Փաշինյանը մնա եւ լինի հետագայում որոշողը, ապա նա որեւէ խնդիր չի տեսնում այդ տարածքներն ադրբեջանական կողմին թողնելու հարցում, սակայն զինվորականներն ասում են, որ դա աղետալի կորուստ է մեզ համար, եւ մենք հետո ենք հասկանալու, թե այդ ստրատեգիական դիրքերը թշնամու վերահսկողության տակ գտնվելն ինչ ողբերգական հետեւանքներ է ունենալու Հայաստանի համար:

Ինչպես տեղեկացրել էինք՝ Նիկոլ Փաշինյանը որոշել է տեռոր անել արցախցիների շրջանում: Նախօրեին հայտնի դարձավ, որ արցախցի նախկին զինվորական Վլադիկ Խաչատրյանին ծանուցել են, որ ազատի մոտ 20 տարվա ծառայության համար տրամադրված ծառայողական բնակարանը: Նա 2-րդ կարգի անժամկետ հաշմանդամություն ունի, իսկ բնակարանն էլ իր եւ ընտանիքի միակ կեցավայրն է: Մեզ ասացին, որ Վլադիկ Խաչատրյանը միակը չէ, որին ծանուցել են՝ ազատել ՊՆ-ի տրամադրած ծառայողական բնակարանը: Թիրախում ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի՝ Միշայի մտերիմ զինվորականներն են եւ նրանք, ովքեր այս տարիներին չեն հասցրել սեփականաշնորհել բնակարանները, ուստի ստիպված կլինեն հանձնել ՊՆ-ին: Անգամ քաղաքական չեզոքություն պահպանող արցախցիներով է զբաղվում: Մեր աղբյուրի կարծիքով, սա պայմանավորված է Փաշինյանի՝ արցախցիների նկատմամբ խոր ատելությամբ եւ Ալիեւի առջեւ ստանձնած պարտավորություններով:

Հալածանքը շարունակվում է

Ոչ մի բանից չխորշող իշխանությունը, որը 2023-ին արցախցիներին թողեց մեն-մենակ ադրբեջանական հրոսակների առաջ եւ նրանց՝ հայրենիք տեղափոխվելուց հետո սկսեց թիրախավորել, չի դադարեցնում արցախցիների հասցեին ատելություն տարածելը: Եվ դա անում է երկրի թիվ 1 պաշտոնյայի շուրթերով, ինչը նրա ստրկամիտ բանակը որպես հրահանգ է դիտում: Մենք՝ հայաստանաբնակներս, որքան էլ ջանքեր ենք գործադրում այդ ատելության ու պառակտման դեմ պայքարելու, անզոր ենք, երբ այդ զազրելի արշավը կազմակերպվում, ղեկավարվում է հենց կառավարության ղեկավարի ու նրա թիմի կողմից: Դեռ 23-24 թվերին այս իշխանությունը մի զազրելի գործընթաց էլ նախաձեռնեց արցախցիների նկատմամբ. չգիտես՝ տգիտությունից թե չարությունից ելնելով, հայտարարեցին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրերը, որոնք ժամանակին տրվել են արցախցիներին, անվավեր են՝ նրանք ՀՀ քաղաքացիություն չունեն: Պատճառն ընդամենը այն էր, որ անձնագրերը տրամադրվել էին 070 բաժանմունքի կողմից՝ 070 կոդով: Անձնագրերը մեկին մեկ նույնն էին, ինչ որ մյուսներինս, բայց սրանք ձեւը գտան՝ այս ճանապարհով եւս արցախցիներին հայաստանցիներից բաժանելու: Եվ սկսվեց մի երկարուձիգ, հալումաշ անող գործընթաց՝ նոր անձնագրեր ստանալու: Ու քանի որ արցախցիները հասկանալի պատճառներով Նիկոլ Փաշինյանին մերժում են՝ նրանց անձնագրեր տալու գործը ՆԳ համակարգի կողմից ամեն կերպ սկսեցին խոչընդոտել, որ նրանք ընտրություններին չմասնակցեն: Նախօրեին հայտարարել էին, որ կան դատարանի վճիռներ՝ արցախցիների անձնագրերը վավեր ճանաչող, ուստի արցախցիները եւս կարող են մասնակցել հունիսի 7-ի ընտրություններին: Բայց գործի անցավ ՔՊ-ական ՆԳ կին նախարարը եւ հայտարարեց, որ արցախցիները չեն կարող օգտվել ընտրելու իրավունքից:

Հանրապետության օրվա առթիվ Զինված ուժերի ներկայացուցիչների պարգեւատրման հարցը բուռն քննարկումների առիթ է դարձել: Ինչպես հայտնի է, Փաշինյանի որոշմամբ՝ բարձրագույն պարգեւի են արժանացել փոխնախարար, նախկին ոստիկանապետ Արման Սարգսյանը՝ «Լամպըչկա» մականունով, եւ պաշտպանության մյուս փոխնախարար Կարեն Բրուտյանը, որոնք «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներ են ստացել: Բանն այն է, որ ՀՈՒ-ում երկուսին էլ յուրային չեն համարում, առավել եւս՝ երկուսն էլ չեն փայլում իրենց մասնագիտական կարողություններով: Արման Սարգսյանը, ըստ համակարգի մեր աղբյուրների, միջակ կառավարիչ է, իսկ Բրուտյանի մասին պատմում են, որ օրվա մեծ մասը սթափ վիճակում չէ, եւ նա էլ է եկվոր՝ ֆինանսական համակարգից: Նաեւ, ըստ լուրերի, փողի հանդեպ մեծ սեր ունի, եւ Փաշինյանը, իմանալով այդ մասին, 2021-ին նրան տեղափոխել է ՊՆ՝ նախարարի տեղակալի պաշտոնին: Տարիների ընթացքում նա զբաղեցրել է տարբեր պատասխանատու պաշտոններ, այդ թվում՝ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ, այնուհետեւ՝ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ԹԵ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Գրել էինք, որ ՀՀ ՀՈՒ-ում եւս ծառայողներին ցուցակագրում են, որ իմանան, թե ՔՊ-ն ինչքան ընտրող ունի: ԱԱԾ-ի, ռազմական ոստիկանության միջոցով փորձում են հայտնաբերել ընդդիմադիրների նկատմամբ չնչին համակրանք ունեցող զինվորականներին եւ տեղեկացնել, որ այլեւս նպատակահարմար չեն գտնում, որ նրանք շարունակեն ծառայությունը: Սուրեն Պապիկյանն ապաքաղաքական այս կառույցն ամբողջովին քաղաքականացրել է, ինչպես կուսակցականացրել է ԵՊՀ-ն, որի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, եւ ամենուր՝ դեկանների, ամբիոնի վարիչների պաշտոններին կարգել է ծանոթներին, իր առաջ խոնարհվողներին: Իսկ ՊՆ-ն ուղղակի դարձրել է սրտիկներ անող կանացի կերպարով տղամարդկանց համակարգ, որտեղ բացարձակապես չեն մտածում մեր սահմանների պաշտպանության եւ թշնամու զինուժը Հայաստանի սուվերեն տարածքից հանելու մասին:

ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ ՀՀ ՍՈՒՎԵՐԵՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹՈՒՐՔԸ ՍՊԱՆԵՑ, ԷԴ ԷԼ ՀՈ ԱՐՑԱԽ ՉԷ՞Ր

«Հրապարակի» զրուցակիցը 2022 թվականին Վերին Շորժայի դիրքերում զոհված Սերյոժա Ղազարյանի հայրն է՝ ***Սերժիկ Ղազարյանը****:*

- Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ժամանակ տարաբնույթ հայտարարություններ է անում, բայց մարդկանց ամենից շատ զայրացրել է նրա այն հայտարարությունը, որ եթե ինքը չվերընտրվի, Ադրբեջանը սեպտեմբերին կհարձակվի Հայաստանի վրա: Մի մարդ, որ 4 պատերազմ ու զինված բախում, այսքան զոհեր է բերել Հայաստանին, ուզում է համոզել, որ իր մնալը բացառելու է նոր պատերազմը: Նա նաեւ ասում է, որ եթե Ռուսաստանը գազի սակագինը թանկացնի, ապա Հայաստանը կարող է Ադրբեջանից գազ ստանալ:

- Նախ ասեմ, որ ես 99 տոկոսով ոչ մի քաղաքական ուժի չեմ հավատում, կարող եք ինձ մեղադրել, բայց ինձ մոտ ոչ ոք հավատ չի ներշնչում: Չորս ղեկավար ունեցանք, չորսն էլ մեզ խաբեցին, ամեն մեկն իր թայֆաներով հարստացել է, ինչ-որ բաների հասել, իսկ երկիրը կործանվել է արդյունքում: Իզուր չէ, որ մեր ժողովրդի 20 տոկոսը հարուստ է, 80 տոկոսը՝ աղքատ: Մենք այժմ այնպիսի տգետ ու ախմախ իշխանություն ունենք, որ իշխանության գալու օրվանից միայն քանդում ու քանդում է: Հայաստանը չունի արդյունաբերություն, չունի գազ ու նավթ, չունի ծով, մեզ համար ամենակարեւոր ոլորտներից մեկը պետք է այսօր լիներ գյուղատնտեսությունը, բայց Նիկոլ Փաշինյանն իշխանության գալու առաջին իսկ օրերին հայտարարեց, որ փակում է գյուղատնտեսության նախարարությունը, որ այն մեզ պետք չէ եւ այլն: Արդյունքում մեր երկիրն օրեցօր ավելի աղքատ է դառնում, մարդիկ ավելի մեծ դժվարությունների առաջ են կանգնում: Ամողջ օրը խոսում են Եվրոպայից, բայց դեռ ինչքան ճանապարհ ունի մեր երկիրն անցնելու, որ հասնի եվրոպական երկրներին:

- Չնայած բոլոր այդ խնդիրներին, Նիկոլ Փաշինյանը սպառնում է կզացնել, սատկացնել ընդդիմադիր ուժերին, հավատացնում է, որ եթե իրեն վստահեն, «ծակն է կոխելու» Ռոբերտ Քոչարյանին, Գագիկ Ծառուկյանի առանձնատունը ծերերի խնամքի կենտրոն է դարձնելու եւ այլն:

- Նա շատ բան կարող է ասել, իր բոլոր ասածների պիտանիության ժամկետը վաղուց անցել է, էլ նրա ոչ մի խոսքին լուրջ վերաբերվող չկա: Ինչպես Ալիեւն է անիմաստ դուրս տալիս՝ ասելով, թե իբրեւ Երեւանն իրենց պատմական քաղաքներից է, այնպես էլ սա՝ միայն անիմաստ հայտարարություններ է անում, բայց տակը բան չկա: Հետեւում եմ այս քարոզարշավին ու զարմանում, նեուժելի՞ մի հատ նորմալ դիվանագետ չունենք, որ մեզ էս խայտառակությունից ազատի: Ինչքա՞ն կարելի է էս անամոթությունները հանդուրժել: Մեզ մի նորմալ ղեկավար է պետք, որ երկիրը կարգի բերի, ժողովրդի մատից գոնե մի հատ փուշ հանի:

- Ընդդիմության շարքերում չկա՞ այնպիսի քաղաքական ուժ, որին վստահում եք:

- Անկեղծ եմ ասում՝ ինձ մոտ ոչ մեկը վստահություն չի առաջացնում: Գուցե լավ բարեգործներ կան, լավ գործարարներ, բայց չգիտեմ, թե նրանք ինչքանով կկարողանան երկիր ղեկավարել: Հավատ չեն ներշնչում մի տեսակ:

- Կարծում եք՝ Փաշինյանից ավելի վա՞տ կղեկավարեն:

- Ես ատում եմ Նիկոլ Փաշինյանին, ես նրա անունն անգամ չեմ ուզում լսել: Նրան ոչ մեկի հետ չեմ կարող համեմատել: Ասում էր՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ: Իսկ հիմա ի՞նչ է անում: Ասում է, որ Արցախը երբեք չի եղել հայկական տարածք: Ես որդեկորույս ծնող եմ, ու ինձ մոտ հարց է առաջանում. լավ, ասենք՝ Արցախը մերը չէր, բայց իմ երեխային Հայաստանի սուվերեն տարածքում թուրքը եկավ սպանեց, բա ինչո՞ւ չկարողացար դեմներն առնել, էդ էլ հո Հայաստան էր: Նման ղեկավարի հետ ո՞վ կարող է հույսեր կապել, ո՞ր մի նորմալ մարդը: Ջերմուկ, Վերին Շորժա եւ այլն: Ի՞նչ գործ ունի ադրբեջանցին այնտեղ:

- Բայց հինգշաբթի օրը Հանրապետության հրապարակում մեծ զորահանդես էին կազմակերպել, զենքեր էին ցուցադրում, գլուխ էին գովում, ինչի՞ համար են այդ զենքերը եւ զինտեխնիկան:

- Հա, մեր հարկերի հաշվին գնացել զենքեր են առել, բայց ո՞ւմ դեմ են դրանք օգտագործելու: Դե թող էդ զենքերով երկու հատ խփեն, ազերիներին վռնդեն մեր տարածքից: Ալիեւը ոնց ասում է, էդպես է անում:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Որոշ դատապարտյալներ չեն ընտրի

Հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրություններին ընտրելու իրավունք ունեն ոչ բոլոր կալանավորները: ԿԸՀ-ից տեղեկացանք, որ ընտրական իրավունք չունեն դիտավորությամբ կատարված ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված եւ պատիժը կրող անձինք: Մյուս դատապարտյալները քվեարկելու են քրեակատարողական հիմնարկներում: 9 ՔԿՀ-ներում ընտրությունների սկիզբը լինելու է ոչ թե ժամը 08:00-ն, այլ՝ համաձայն ԿԸՀ-ի կողմից սահմանված ժամանակացույցի: Մասնավորապես՝ «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ում (9/61 տեղամաս) քվեարկության սկիզբը 17:00-ն է, «Նուբարաշեն» (10/56 տեղամաս), «Արմավիր» (14/65 տեղամաս), «Սեւան» (26/41 տեղամաս) ՔԿՀ-ներում՝ 11:00-ն, «Վարդաշեն» (10/57 տեղամաս) եւ «Վանաձոր» (23/64 տեղամաս) ՔԿՀ-ներում՝ 14:00-ն: «Աբովյան» (29/51 տեղամաս) եւ «Գորիս» (34/75 տեղամաս) ՔԿՀ-ներում՝ 15:00-ն: Իսկ «Արթիկ» ՔԿՀ-ում (33/55 տեղամաս) քվեարկության սկիզբը 12:00-ն է: Նշենք, որ ՔԿՀ-ներում ձեւավորվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներ, քվեարկությունն ավարտվելու է 20:00-ին:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Կորշի աշխատանքը՝ Նիկոլն է եկել

Մայիսի 29-ին Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ-ականները քարոզչություն են արել Տավուշի մարզում: Դիլիջանում քարոզչական հավաքին ստիպողաբար տարել են համայնքապետարանի ու դրա ենթակա հիմնարկների աշխատողներին: Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում հանրակրթական դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Աղաջանյանն աշխատանքային ժամին գնացել է հավաքին եւ իր հետ տարել դպրոցի ուսուցիչներին, աշխատողներին: Բերդ քաղաքից հայտնեցին, որ Բերդի բժշկական կենտրոնի անձնակազմը՝ թողած աշխատանքը, վերադասի հրահանգով մասնակցել է քաղաքի ավտոկայարանում կայացած հանդիպմանը՝ Նիկոլ Փաշինյանի եւ ժամանած ՔՊ-ականների հետ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՐԱԺԱՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԲԱՆԱԿԻՑ

Մայիսի 29-30-ը Նիկոլ Փաշինյանը ՔՊ-ականների հետ Տավուշի մարզում է, նախընտրական քարոզչություն է անում: Նրանք Դիլիջան մուտք գործեցին ավտոմեքենաների շարասյուներով, դրոշներով, մեքենաները Դիլիջանի հին «ՈՒԱԶ»-ներն էին: Փաշինյանը Դիլիջանում ելույթ ունեցավ մշակույթի պալատի առաջ: Այդ շենքը 2022թ. նոյեմբերից գտնվում է վերանորոգման մեջ, բայց վաղուց շինարարական աշխատանքներ չեն կատարվում: Վերանորոգման սուբվենցիոն ծրագրի արժեքը 283 միլիոն դրամ է, որի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, մնացածը կառավարությունն է հատկացրել: Ոչ մի դիլիջանցի Փաշինյանին հարց չտվեց, թե երբ է շարունակվելու ու ավարտվելու Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը:

ՔՊ-ի քարոզչական հավաքին 16 հազար բնակիչ ունեցող Դիլիջան քաղաքից ընդամենը 70-80 հոգի էր մասնակցում, նրանք էլ Դիլիջանի համայնքապետարանի ու դրան ենթակա հիմնարկների աշխատողներ էին, կենսաթոշակառուներ: Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում ուրախության մթնոլորտ է ձեւավորվել, եւ դա առաջին հերթին խաղաղության շնորհիվ է: «Այս ընտրություններում ամենակարեւոր հարցը հետեւյալն է, թե արդյոք Հայաստանի քաղաքացին տեր կանգնելո՞ւ է այդ խաղաղությանը: Սա պաշտոնի եւ աթոռի կռիվ չի, սա պայքար է հանուն պետության, հանուն անկախության, հանուն ապագայի եւ խաղաղության»,- ասաց նա եւ հորդորեց քաղաքացիներին՝ հունիսի 7-ին գնալ ընտրատեղամասեր եւ տեր կանգնել խաղաղությանը, այսինքն՝ ընտրել ՔՊ-ին:

Անդրադառնալով մայիսի 28-ին Երեւանի Հանրապետության հրապարակում անցկացված զորահանդեսին՝ Փաշինյանը շնորհավորեց բոլորին նոր բանակ ունենալու առիթով՝ նշելով, որ այն, ինչ ցուցադրվել է զորահանդեսի ժամանակ, բոլորը գործարանային զենքեր են: Նկատենք, որ Փաշինյանը նոր բանակ հռչակելու, ՀՀ զինված ուժերի զինանշանը, զինվորական համազգեստի աստղերը, տարբերանշանները փոխելու միջոցով, ըստ էության, հրաժարվում է 1990-ական թվականներին հաղթանակած հայկական բանակից, ազգային հերոսամարտից, դրա հերոսներից: Այդ հրաժարումը տեղավորվում է ամենայն հաղթականից, ձեռքբերումներից հրաժարվելու, պատերազմում մեր պարտությամբ հպարտանալու Փաշինյանի եւ ՔՊ-ի գործելակերպում:

Իր մորական պապի գյուղում՝ Հաղարծինում, Ն. Փաշինյանն առատորեն սնվեց, հետաքրքրվելով՝ խաշլաման պատրաստ է: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը Փաշինյանի համար մատուցողի դեր էր կատարում՝ նրան լավաշով ծածկված խորոված մատուցելով: Այդ ընթացքում Հաղարծինի բնակիչները հավաքված սպասում էին, թե երբ է Փաշինյանն իր ճաշն ավարտելու: Նա Հաղարծինում հայտարարեց, որ ինքը 2019-ին Հաղարծինի բնակիչներին հորդորել է անջատել փայտ կտրող սղոցները, այսինքն՝ փայտ չկտրել անտառից: Եվ նշեց՝ փայտ տեղափոխող ավտոմեքենաներով հիմա Հաղարծինի երիտասարդները զբոսաշրջիկներ են տեղափոխում մոտակա Դիմաց սար:

8 տարի վարչապետ աշխատած Ն. Փաշինյանը Հաղարծինին կից Թեղուտ գյուղի մասին ներկաներին հարցրեց. «Հիմա Թեղուտն առանձին վարչական միավոր ա՞, վարչական շրջան ա, հա՞, Թեղուտ եւ Հաղարծին վարչական շրջանները, բնակավայրերը»: Խոսելով Հաղարծինի տարածքում սողանքից ավերված երկաթգծի մասին՝ նա սողանքն անվանեց «սողանցք», գյուղի երեխաներին կրկին թխվածք բաժանեց: Բայց, ի տարբերություն նախկին հանդիպումների, նա այլեւս բնակիչների հարցերին չի պատասխանում, ելույթ է ունենում, Հայաստանի քարտեզ-մագնիսն ու կեքսը բաժանում եւ հեռանում:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԱՍՏՂԱ

Տվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) այդքան սպասված գագաթնաժողովից հետո՝ երեկ, որոշ շրջանակների տագնապալից սպասումներն իրականություն չդարձան: Խոսակցություններ կային, որ Հայաստանին հնարավոր է դուրս թողնեն ԵԱՏՄ կազմից, քանի որ պաշտոնական Մոսկվան հստակություն է պահանջում Երեւանից՝ կամ մնալ ԵԱՏՄ-ում, կամ շարունակել ճանապարհը ԵՄ-ի հետ: Խոսվում էր նաեւ խիստ պատժամիջոցներ կիրառելու մասին, թեպետ արդեն շաբաթներ շարունակ հայկական արտադրանքը չի արտահանվում ռուսական շուկա կամ մասամբ է արտահանվում, եւ հայտարարություններ են հնչում գազի գնի թանկացման մասին:

Այս ֆոնին իշխանության ներկայացուցիչները՝ Փաշինյանի առաջնորդությամբ, վերջին օրերին կարծես փորձում էին մեղմել Մոսկվայի զայրույթը: Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ ճեպազրույցում օրերս հայտարարեց, թե Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ծագած հարցերի շուրջ լուծումներ կգտնվեն, իսկ կից Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանին, որն այն պետք է փոխանցի Նիկոլ Փաշինյանին: Երեկ Աստանայում ունեցած ելույթում Գրիգորյանը հայտարարել է, որ Հայաստանը մտադիր է հետագայում եւս բարեխղճորեն մասնակցել ԵԱՏՄ աշխատանքներին, ինչից ենթադրվում է, որ Հայաստանին ԵԱՏՄ-ից դուրս թողնելու որոշման մասին խոսք լինել չի կարող: Ավելի ուշ տեղեկացանք, որ չորս պետությունների առաջնորդները Փաշինյանին մեկ անգամ եւս հորդորել են հստակ ընտրություն կատարել ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ՝ համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Եվ որոշել են հարցին անդրադառնալ 2026 թվականի դեկտեմբերին կայանալիք նիստում, որի ժամանակ ԵԱՏՄ անդամները կներկայացնեն «ԵԱՏՄ անդամակցության դադարեցման հնարավոր հետեւանքները Հայաստանի համար»: Նաեւ արձանագրել են, որ Հայաստանի՝ «ԵՄ-ին անդամագրման նախապատրաստությունը պարունակում է տնտեսական ռիսկեր ԵԱՏՄ երկրների համար»:

կերպմամբ, համաժողովի թեմաներից մեկն էլ ԵԱՏՄ-ի ու ՀԱՊԿ-ի հարցերն էին: Ես օրերս վերադարձել եմ Հայաստան եւ հարցազրույցներից մեկում հստակ ասել, որ չեմ կարծում, թե հիմա կդրվի Հայաստանի՝ ԵԱՏՄ-ից դուրս գալու հարցը: Ինչո՞ւ. որովհետեւ նման հարցերն այդկերպ միանգամից, արագ չեն լուծվում: Բայց որ կլինեն սանկցիաներ, կլինի հռետորաբանության կոշտացում, որ կարող են հայտարարություն ընդունել, ԵԱՏՄ գործընկերները կհորդորեն ՀՀ իշխանություններին՝ հստակ կողմնորոշվել, հիմա դրա ականատեսն ենք լինում: Հայաստանն էլ երբեք չի ասել, որ ԵԱՏՄ-ից դուրս ենք գալիս, եւ խնդիրը դրանում չէ, այլ՝ նրանում, որ ԵԱՏՄ առաջամարտիկ Ռուսաստանը թշնամական հարաբերություններ ունի ԵՄ-ի հետ, եւ Հայաստանը գոնե ֆորմալ առումով ՌԴ-ի դաշնակիցն է: Այդ իմաստով շատ հստակ հարց են դնում՝ եթե ԵԱՏՄ-ում եք, բայց օրենք եք ընդունում ԵՄ գնալու համար, նորմալ չէ, պետք է կողմնորոշվեք»:

Շարմազանովի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանը ոչ թե պետք է պատասխանի՝ մնո՞ւմ է ԵԱՏՄ-ում, այլ՝

ստեղ անելիք չունես: Բայց մյուս կողմից էլ Փաշինյանի թիմը մեկ տարուց ավել է՝ ԵՄ-ին անդամակցության հայտի վերաբերյալ խորհրդարանում նախագիծ է ընդունել, այդ ինչո՞ւ նոր հիշեցին, թե՞ հույսեր էին փայփայում Փաշինյանի հետ, կամ ԵԱՏՄ անդամ պետություն Ղազախստանը չէ՞ր Փաշինյանին բարձրագույն պետական պարգեւ շքանշանի արժանացնում: Ես մի բան կարող եմ ասել, որ համա-

ՈՆՑ ՈՐ ՎԱՐԴՈՒՀԸ ՊԵՏՐՈՍԻ ՀԵՏ ՊՍԱԿՎԱԾ ԼԻՆԻ, ԲԱՅՑ ԱՉՔ ՈՒՆԵՆԱ ՊՈՂՈՍԻ ՎՐԱ

Հայաստանի տնտեսությանը որեւէ վտանգ չի սպառնում: Նաեւ իրեն բնորոշ ոճով՝ վտանգ զգացածի բնազդով ասաց, թե Ռուսաստանի նախագահի եւ կառավարության ղեկավարի հետ ունեն վստահելի հարաբերություններ:

ԵԱՏՄ երեկվա գագաթնաժողովի շրջանակում Աստանայում ԵԱՏՄ անդամ չորս երկրների ղեկավարները հայտարարություն են ընդունել եւ այն փոխանցել միջոցառմանը մասնա-

ՀՀԿ-ական **Էդուարդ Շարմազանովի** կարծիքով, առնվազն միամտություն էր ակնկալել, որ մեր երկրին պետք է դուրս թողնեին ԵԱՏՄ կազմից. «Ես՝ որպես մարդ, որը երկար տարիների փորձ ունի հայ-ռուսական պատգամավորական հարաբերություններում, այնուհետեւ՝ Հանրապետական-«Եդինայա Ռոսիա» ֆորմատով, ես էլ Ռուսաստանից նոր եմ վերադարձել, որտեղ համաժողով կայացավ՝ ԵՌ-ի կազմա-

գնո՞ւմ է ԵՄ, թե՞ ոչ: «Որովհետեւ տպավորություն է ստեղծվում, որ, կենցաղային ձեւով բացատրեմ՝ ոնց որ Վարդուշը Պետրոսի հետ պսակված լինի, բայց աչք ունենա Պողոսի վրա, ասի՝ քանի դեռ Պողոսն ինձ առաջարկություն չի արել, Պետրոս ջան, քո հետ կապրեմ, բայց հենց առաջարկություն անի, փասափուսես կհավաքեմ, կգնամ Պողոսենց տուն: Պետրոսն էլ ասում է՝ եթե գլխանց աչքդ Պողոսի վրա է, ուրեմն

միտ եմ Սամվել Կարապետյանի հետ, որ այս սանկցիաները պետք չէ կիրառել, որովհետեւ բորշչը սարքել է Նիկոլը, ջառմեն քաշում է ժողովուրդը: Սա է խնդիրը»,- ասաց Շարմազանովը եւ ընդգծեց, որ դեմ են Փաշինյանի արտաքին քաղաքականությանը: Նա հիշեցրեց, որ «Պատիվ ունեմ»-ը միակ խմբակցությունն է, որ դեմ քվեարկեց ԵՄ-ին անդամակցության հայտնի նախագծին՝ հաշվի առնելով նման զարգացումները:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՀԱՐՅՈՒՐ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ստեղեկություններով, ՀՀ իշխանությունների կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ներկայացվել են զգալի չափերի հարկային պահանջներ՝ ներառյալ հարկերը, տույժերն ու տուգանքները: Խոսքը վերաբերում է ինչպես եկեղեցական մոմերի արտադրության համար օգտագործվող պարաֆինի ավելացված արժեքի հարկին, այնպես էլ Մայր Աթոռին պատկանող որոշ անշարժ գույքերի հարկային պարտավորություններին:

Հատկանշական է, որ նշված պահանջները, ըստ առկա տեղեկությունների, ներկայացվել են առանց անհրաժեշտ իրավական հստակեցումների, գույքի եւ ապրանքների փաստացի նշանակության պատշաճ ուսումնասիրման, ինչպես նաեւ՝ դրանց եկեղեցական եւ ծիսական գործառույթի լիարժեք գնահատման: Արդյունքում հարկային մարմինների կողմից կիրառվել են ոչ միայն հարկային պարտավորություններ, այլեւ զգալի տույժեր եւ տուգանքներ:

Մասնավորապես, մեր տեղեկություններով, Մայր Աթոռին ներկայացվել է շուրջ 220 միլիոն ՀՀ դրամի պահանջ՝ պարաֆինի ԱԱՀ-ի, ինչպես նաեւ դրա հետ կապված տույժերի եւ տուգանքների մասով: Մայր Աթոռը նշված գումարն արդեն վճարել է՝ հետագա բացասական հետեւանքներից խուսափելու նպատակով:

Միաժամանակ, բաց է մնում այն հարցը, թե ինչու է հարկման ենթարկվում պարաֆինը, եթե այն օգտագործվում է բացառապես ծիսական նշանակություն ունեցող արտադրանքի՝ եկեղեցական մոմերի արտադրման համար: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական կյանքում մոմն ունի առանձնահատուկ նշանակություն, եւ դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի հարկման հարցը դժվար է դիտարկել միայն սովորական տնտեսական գործունեության շրջանակում:

Բայց սա ամբողջը չէ՝ մեզ հայտնի է դարձել նաեւ, որ Մայր Աթոռին ներկայացվել է շուրջ 110 միլիոն ՀՀ դրամի անշարժ գույքի հարկի, տույժերի եւ տուգանքների պահանջ՝ Վաղարշապատ համայնքում գտնվող եկեղեցապատկան որոշ գույքերի մասով: Այս հարցում եւս առկա են լուրջ իրավական եւ փաստական անհամապատասխանություններ: Խոսքը վերաբերում է այն եկեղեցական կառույցներին, որոնք խորհրդային տարիներին զրկվել էին իրենց բուն նշանակությունից եւ օգտագործվել որպես պահեստներ կամ այլ տնտեսական նշանակության շինություններ: Այդ ժամանակահատվածում դրանք պետական գրանցումներում դասակարգվել են ոչ թե որպես եկեղեցի կամ պաշտամունքային կառույց, այլ որպես պահեստային կամ այլ տեսակի անշարժ գույք:

Անկախությունից հետո այդ կառույցներից մի քանիսը վերադարձվել են իրենց նախնական հոգեւոր եւ ծիսական նշանակությանը, վերաօծվել եւ փաստացի գործում են որպես եկեղեցիներ: Սակայն, ըստ էության, դրանց մի մասի իրավական եւ կադաստրային կարգավիճակը մինչ օրս ամբողջությամբ չի համապատասխանեցվել իրական նշանակությանը: Արդյունքում ստեղծվել է իրավական առումով խիստ հակասական իրավիճակ. այսօր գործող որոշ եկեղեցիներ շարունակում են դիտարկվել որպես հարկման ենթակա սովորական անշարժ գույք՝ նախկին խորհրդային շրջանի ձեւական գրանցումների հիման վրա:

Ընդ որում, խնդիրը չի սահմանափակվում միայն եկեղեցիներով կամ պաշտամունքային կառույցներով: Հարկման դաշտում են հայտնվել նաեւ եկեղեցապատկան կրթամշակութային կառույցները, եկեղեցիների օգտագործման ու սպասարկման հողատարածքները, որոնք ծառայում են ոչ թե առեւտրային նպատակների, այլ Հայ Եկեղեցու հոգեւոր եւ ազգապահպան առաքելությանը:

Փաստորեն, Մայր Աթոռին ներկայացված պահանջների հիմքում դրված է ոչ այնքան գույքի եւ ապրանքների իրական նշանակության համակողմանի ուսումնասիրությունը, որքան ձեւական գրանցումներն ու վարչական մո-

տեցումները: Այս ամենը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ վարչաֆինանսական ճնշման դրսեւորում է՝ Նիկոլ Փաշինյանի արշավի շարունակությունը:

Իրավական պետության պայմաններում նման հարցերը պետք է լուծվեն ոչ թե տույժերի եւ տուգանքների մեխանիկական կիրառմամբ, այլ փաստերի ամբողջական ուսումնասիրությամբ, եկեղեցական գույքի առանձնահատուկ կարգավիճակի հաշվառմամբ եւ պետություն–եկեղեցի հարաբերություններին համարժեք պատասխանատու մոտեցմամբ: Մանավանդ՝ Մայր Աթոռը չի հրաժարվում հարկային պարտավորություններ կատարելուց եւ այս թեմաների շուրջ երկխոսությունից:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԻՆՉԵՎ ԵՐԲ Է ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՆԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՁԵՎՈՎ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ

Հայաստանը Համաշխարհային բանկից 170,3 մլն եվրոյի նոր վարկ է վերցնում՝ պետբյուջեի համալրման համար, այսինքն՝ մոտ 200 մլն դոլար:

Այն տրվում է որպես «Հայաստանի տնտեսական վերափոխման զարգացման քաղաքականության վարկ», տարեկան մոտ 3,7% տոկոսադրույքով, 28 տարի ժամկետով եւ 10 տարի արտոնյալ ժամանակահատվածով: Որոշումը կայացվել է կառավարության մայիսի 27-ի նիստի ժամանակ: Որոշման հիմնավորման հատվածում նշվում է, որ վարկը ծառայելու է ներդրումների եւ առեւտրի ազատականացման, մրցակցության խրախուսմանը, մաքսային բարեփոխումներին, տնտեսական մրցակցության պաշտպանությանը, կանաչ տնտեսության զարգացմանը եւ այլն: Եվ ամենավերջում նշվում է պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կայուն աղբյուրների ու մակրոտնտեսական կայունության ապահովումը: Այլ կերպ ասած՝ սա լայն աջակցություն է իշխանություններին: Վերցվող պարտքը մտնելու է բյուջե ու դառնալու է թոշակ եւ աշխատավարձ՝ էլ ավելի աճեցնելով Հայաստանի արտաքին պարտքը, որն արդեն հատել է 14 մլրդ դոլարի սահմանը:

Մինչեւ ե՞րբ է Փաշինյանն անկառավարելի ձեւով ավելացնելու արտաքին պարտքը, ո՞վ պետք է վերահսկի: Տնտեսագետ **Սուրեն Պարսյանը** նշում է, որ կոնկրետ այս փաթեթին ծանոթ չէ, բայց ԱՄՀ-ից, Համաշխարհային բանկից ժամանակ առ ժամանակ նման փաթեթներ վերցնում ենք՝ բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորելու համար: «Այդ կառույցները հեշտ չեն տալիս նման վարկերը: Ընդհանրապես, միջազգային կազմակերպությունները հակված չեն դեֆիցիտը ֆինանսավորելուն: Իրենք տալիս են հիմնականում կառուցապատման համար՝ ճանապարհներ, ջրամբարներ կառուցելու»: Փաշինյանի կառավարությանն այս նախընտրական ընթացքում ակնհայտ լավություն են անում: Չկամ մի ստոպ-կռան, որ դադարեն վերցնել նման վարկեր, որոնցով կառավարությունը փակում է իր անիմաստ ծախսերը, իր անշնորհիք կառավարման հետեւանքով առաջացած դեֆիցիտը: «Դա միայն Ազգային ժողովի կոճակն է ու 60 տոկոս ՀՆԱ-ի չափը, որը չպետք է գերազանցվի: Այս պահին դեռ 52 տոկոս է, այլ սահմանափակում չկա»,- ասում է Սուրեն Պարսյանը:

Նշենք, որ Հայաստանի արտաքին պետական պարտքի կառուցվածքում Համաշխարհային բանկը (ՎԶՄԲ եւ ՄԶԸ) ամենախոշոր վարկատուն է, որի մասնաբաժինը կազմում է արտաքին պարտավորությունների շուրջ 37-38 տոկոսը՝ ֆինանսների նախարարության տվյալներով: 18 թվից հետո ՀԲ-ն ավելի շատ փող է տալիս Հայաստանին, քան մինչ այդ: Եթե 1992-2018 թվականների ընթացքում (26 տարի) ՀԲ-ն Հայաստանին ընդհանուր առմամբ տրամադրել էր շուրջ 2.3-2.4 միլիարդի դոլարի աջակցություն, ապա 2026 թվականի դրությամբ այդ համախառն ցուցանիշը հասել է շուրջ 3 միլիարդ ԱՄՆ դոլարի: Պաշտոնական պատճառը, իբր, կոռուպցիայի դեմ պայքարն է, տնտեսության աճի բարձր տեմպը եւ այլն, որոնք իրականության հետ ծիծաղելի համեմատականների մեջ կարելի է դնել:

Մի այդպիսի համեմատական է անում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանը**: «Ներկայիս իշխանությունները հաշվետվություններ են տալիս ՄԱԿ-ի տարբեր կառույցներին՝ առ այն, որ ՀՀ-ում կա թվային գյուղատնտեսություն՝ Digital Agriculture, ու այս բառերից հետո խորհուրդ եմ տալիս գնալ ու նայել թշվառ վիճակում գտնվող մեր գյուղացու դեմքին, որն իր առաջ ծառացած ահավոր խնդիրները չի կարողանում լուծել առանց պետական աջակցության: Այս ամենը չտեսնելու են տալիս բազմաթիվ միջազգային կառույցներ, նրանք կույր են, որովհետեւ իրենց դա ձեռնտու է: Նման երկիր, որտեղ ամենաթողություն է տիրում, նրանք դժվար գտնեն: Իրենց դիմում են, նրանք էլ տալիս են, եւ օրինաչափ է, որ հիմա են գնում այդ քայլերին, որովհետեւ իրենք շատ լավ գիտեն, որ իշխանությունները չեն վճարելու այդ կուտակված պարտքը»:

«Սրանք ի՞նչ վարկեր են, մեկ էլ հանկարծ կառավարության նիստերի ժամանակ իմանում ենք, որ նոր ահռելի փողեր ենք պարտք վերցնում, ո՞վ ու ինչպե՞ս է դա որոշում: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը հստակ պահանջներ է ներկայացնում գործադիր մարմնին, թե ինչպես պետք է ձեւավորվի պետական պարտքը: Պետք է հիմնավորվի, որ բյուջեի եղած միջոցները չեն բավարարում նախատեսված ծախսերի համար, ինչ-ինչ պատճառներով, ասենք, հարկային մուտքերի չնախատեսված կրճատման դեպքում: Ապա պետք է հիմնավորվի առաջնահերթությունը՝ ինչո՞ւ այս պահին կարիք կա փոխառու միջոցների: Այս պատճառաբանություններից հետո գործադիրը պետք է քննարկում կազմակերպի, հետո ներկայացնի ԱԺ, որտեղ պետք է քննարկում գնա պետական պարտքի վերաբերյալ, ինչը ես երբեք չեմ տեսել: ՀԲ-ն ուզում է չնկատել այս ընթացակարգերի խախտումները: ՀԲ-ն ըստ էության տեղյակ է, թե ինչպես են ծախսվել նախորդ վարկերը: Դրանց արդյունավետության մասին որեւէ հաշվետվություն լսե՞լ եք, որ նախորդ վարկերի գումարները նպատակին են ծառայել, վերադարձվել են տոկոսադրույքները եւ այլն»,- արձագանքում է Մանասերյանը:

Նա նաեւ հիշեցնում է, որ «Պետական բյուջեի մասին» օրենքը կատարման ենթակա է, իսկ դրա չկատարումն ուղղակի հանցագործություն է: «Բայց 2025 թվականի պետբյուջեի մասին օրենք ընդունվեց, նույն հարցերը՝ կենսաթոշակներ, սոցիալական աջակցություն եւ այլն, բարձրացվել էին եւ մերժվել: Ի՞նչ հրաշք է տեղի ունեցել անցած 2-3 ամսվա ընթացքում: Եթե հիշում եք, փետրվարի վերջին-մարտի սկզբին կենսաթոշակները բարձրացնելու խոստումները եղան, դրա իրավունքը գործադիրն ընդհանրապես չուներ, դա պետք է քննարկվեր ու նոր օրենք դառնար, ինչը չարվեց... Եթե մենք որեւէ խախտում կատարենք, մատնանշում են օրենքը, նույնը այս պարագայում՝ օրենքի խախտում է, իսկ օրենքի խախտումն ուրիշ անուն չունի՝ հանցագործություն է: Այս հանցագործությունները պետք է ուսումնասիրվեն եւ հիմնավորվեն, այս արատավոր պրակտիկային պետք է վերջ դրվի»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՁԱԽՈՂԵԼ Է ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐՐՈՐԴ ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հշխանամերձ շրջանակներում վերջին օրերին «Գազպրոմ Արմենիան» ազգայնացնելու մասին կոչեր են հնչում: Նման կոչ-սպառնալիքով է հանդես եկել նաեւ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի հիմնադիր Դանիել Իոաննիսյանը: «Հրապարակ»-ի հետ զրույցում էներգետիկ անվտանգության փորձագետ **Վահե Դավթյանը** հայտնեց, որ եթե հարցը դիտարկենք իրավական հարթության մեջ, ապա դրա հնարավորությունը կա. «Հաշվի առնելով հանգամանքը, որ արդեն ունենք նախադեպ՝ ՀԷՑ-ի օրինակով, ապա սա եւս չի բացառվում, բայց առանց անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների այս պահի դրությամբ, օրինակ, եթե իշխանությունը որոշի նմանատիպ գործընթաց սկսել, ապա դրա հիմքերը չկան: Սակայն եթե լինի նման քաղաքական նպատակադրում, ապա օրենսդրական որոշակի փոփոխությունների արդյունքում հնարավոր է նման ծրագիր իրականացնել»: Սակայն պարզ է, որ «Գազպրոմ Արմենիան» ազգայնացնելը նախեւառաջ նշանակում է զրկվել ռուսական գազից:

Հարցին, թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ նման որոշումը, Դավթյանը պատասխանեց. «Սա ունենալու է խիստ բացասական հետեւանքներ թե՛ Հայաստանի ներդրումային միջավայրի համար, թե՛ առհասարակ: «Գազպրոմ Արմենիան»-ն ունի ՀԾԿՀ-ի կողմից հաստատված ներդրումային ծրագիր, որը մինչեւ 2030թ. կազմում է 400 մլն դոլար: Սա արդեն հաստատված ծրագիր է, եւ եթե Հայաստանի իշխանությունը գնա նման արկածախնդրության, ապա ինքը պետք է ստանձնի նախեւառաջ ներդրումային ամբողջ պարտականությունները, իսկ հաշվի առնելով այն, որ Հայաստանն այսօր ունի բավականին մեծ խնդիրներ՝ կապված բյուջետային քաղաքականության հետ, օրերս էլ իմացանք, որ դիմել են Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ՝ 170 մլն եվրո բյուջետային աջակցության նպատակով: Սա ասում եմ, որովհետեւ հաշվի առնելով վարկաբյուջետային քաղաքականության խնդիրները, ՀՀ-ն այսօր սեփական միջոցներով ի վիճակի չէ նման լայնածավալ ներդրումներ իրականացնել գազատրանսպորտային համակարգում: Բացի այդ, եթե միակողմանի ռեժիմով նախաձեռնվում է նմանատիպ քայլ, եւ կառավարությունը գնում է ազգայնացման ճանապարհով, ապա, բնականաբար, պետք է հաշվի առնել նաեւ այն կոմպենսացիաները, որոնք կառավարությունը պետք է իրականացնի ռուսական ընկերության համար՝ մի քանի ուղղությամբ: Օրինակ, նույն Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի մասով, որը պատկանում է «Գազպրոմին» եւ կառուցվել է նրա կողմից, եւ հաշվի առնելով, որ ՀՀ-ն փաստացի ձախողել է Իրան-Հայաստան երրորդ բարձրավոլտ գծի կառուցման աշխատանքները, ճիշտ է՝ հայտարարվում է, որ շուտով հանձնվելու է շահագործման, բայց դեռեւս 2020-21թթ. պետք է պատրաստ լիներ այդ ենթակառուցվածքը: Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկն ի սկզբանե նախագծված էր եւ իր բիզնես մոդելում ենթադրում էր հետեւյալը, որ այն պետք է ինտեգրված լինի Հայաստան-Իրան էներգետիկ փոխգործակցության մեջ, եւ քանի որ երրորդ բարձրավոլտ գիծն առայսօր կառուցված չէ, ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը «Գազպրոմի» կողմից պարզապես կանգնեցված է, եւ, բացի դրանից, կուտակվել են հսկայական պարտքեր: Խոսքը գնում է մոտ 100 մլն դոլարի մասին, եւ այս փոխհատուցումը պետք է կառավարությունն իրականացնի, եւ որոշակի փոխհատուցման մեխանիզմներ արդեն իսկ մշակվել եւ իրականացվում են, որովհետեւ փաստացի այդ օբյեկտը սառեցվել է այս պահի դրությամբ կառավարության վերոնշյալ նախագծի ժամանակին չիրականացման հետեւանքով: Այլ ուղղություններով եւս ծախսեր կան, որոնք պետք է հաշվի առնել»:

Եզրափակելով խոսքը՝ Դավթյանը նշեց, որ տեսականորեն նման բան հնարավոր է, բայց այն էականորեն ավելացնելու է արտաքին պարտքը, ինչը անխուսափելի է:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԹԵՄԱՆ

ԷՇԻ ՀԱՐՍԱՆԻՔ – 2

Զորահանդեսը, ինչի մասին ամիսներ շարունակ խոսում էին ՔՊ-շնիկները, վերջապես կայացավ: «Գրանդիոզնի» միջոցառում էր… Տափակ, ծիծաղելի, լացելու, տագնապալի, մերժելի եւ, այս ամենով հանդերձ՝ «գրանդիոզնի», այսինքն՝ ինչ-որ ակնառու բան, որ աչքի է ընկնում իր հսկայական մասշտաբով, վեհությամբ եւ ծավալով: Կարճ ասած՝ մեծ բան: Ոմանք դա անվանեցին զորահանդես, ոմանք՝քարոզարշավ, ոմանք՝ կապիտուլյացիա, ոմանք էլ՝ Հայոց բանակին պարտադրված էշություն: Ես այս վերջին խմբին եմ պատկանում: Այո, Հայոց բանակին պարտադրել էին մասնակցել մի միջոցառման, որը ոչ այն է՝ Նիկոլի հերթական կռուտիտի հետեւանքն էր, ոչ այն է՝ քարոզարշավ, ոչ այն է՝ Հայաստանի անպաշտպանության ցուցադրություն: Մի խոսքով՝ դա մի յուրատեսակ էշի հարսանիք էր, որին մասնակցում էր Հայոց բանակը:

Իսկ էշությունը սկսվել էր ավելի վաղ, երբ Երեւանի փողոցներում առաջին անգամ հայտնվեցին իրական Հայաստանի զինված ուժերի, այսպես կոչված, ավելի իրական զինանշանները: Արծիվը, շատ ներողություն, նման է իր ծառայություններին համար էն գլխից լավ վճարված մարմնավաճառի, որ, ոտքերը չռած՝ սպասում է տարփածուին: Լավ է, գոնե այնքան ամոթ ունի, որ ամենաինտիմ տեղերը ծածկել է վահանի նմանվող ինչ-որ կլոր բանով: Սա դեռ միակ խայտառակությունը չէ: Արծվի ձախ ոտքի ճանկերում խաչ կա, թե տեսեք, տեսեք, ես մեր հոգեւոր արժեքների պահապանն եմ: Եվ իսկույն բնական հարց է առաջանում այս զինանշանը նկարած «արվեստագետին»՝ պարոն կամ տիկին նկարիչ, դուք երբեւէ տեսե՞լ եք, որ հոգեւորականը ձախ ձեռքով խաչ բռնի կամ խաչակնքի:

Երկու խոսք էլ՝ քարտեզի մասին, որ չկար նախկին զինանշանի վրա: Այն անճաշակ ձեւով կախված է հայոց Եռագույնից՝ ճիշտ այնպես, ինչպես Նիկոլի ու ՔՊ-շնիկների դոշերից, եւ ոչ թե Հայաստանի քարտեզի, այլ կրծմրծած «պեչենու» տպավորություն է թողնում: Արհեստական բան կա քարտեզի եւ Եռագույնի «միասնության» մեջ: Եթե վաղը, մյուս օրը, 5, 10, 20 տարի հետո մեզ բախտ վիճակվի ազատագրել բոլոր հայկական գավառները, ինչպես դա ամրագրված է Առաջին Հանրապետության անկախության հռչակագրով, մեզ, ինչ է, պիտի ցույց տան ՀՀ ԶՈՒ զինանշանի վրայի այդ ծռտի քարտեզն ու հարկադրեն դո՞ւրս գալ ազատագրված տարածքներից: Հանրագումարի բերելով «նոր» զինանշանի ողջ խորհուրդը՝ կարելի է հստակ ձեւակերպել այսպես. «պոռնոգրաֆիա+հոգեւոր ծաղրուծանակ+սահմանագծված կապիտուլյացիա»: Ավելի կմ՞ոռ եք ուզում՝ խնդրեմ. «Նիկոլի 8 տարվա վարչապետության արգասիք»:

Իսկ հիմա գանք բուն զորահանդեսին: Հիշո՞ւմ եք, թե Օստապ Իբրահիմովիչն ինչ ասաց Շուրա Բալագանովին, երբ պատրաստվում էր գնալ Չեռնոմորսկ… «Շարային զորքերն ուղարկեք իմ հրամանատարության տակ: Զորամասերը պետք է հնարավորինս շուտ ժամանեն Չեռնոմորսկ: Համազգեստը՝ պահազորային: Դե թմբուկ զարկեք: Ես կլինեմ զորահանդեսի հրամանատարը»: Բենդերը զորքերի մասին խոսելիս իսկական բանակներ նկատի չուներ: Նրա բանակը կազմված էր Շուրայից, Պանիկովսկուց եւ Կոզլեւիչից, որն ավելի ուշ միացավ խմբին: Բայց որքան բարձր էր Բենդերը գնահատում իր ենթակաների այդ «բանակը»:

Իսկ ի՞նչ կատարվեց Հայոց բանակի հետ Երեւանում: Ովքե՞ր էին հրաման տալիս մեր երբեմնի փառապանծ բանակին՝ Պապիկյան Սուրոն, Փաշինյան Նիկո՞լը, բանակում դատվածն ու բանակից փախածը… Տո Սուրո, որ քեզ ճղում էիր՝ «Ողջո՛ւյն…», մտավախություն չունեի՞ր, որ զորքը քեզ կարձագանքեր այնպես, ինչպես սյունեցիք Նիկոլին՝ «ողջույն, բ… տղա»: Կարծում եմ՝ այդ դրվագում բախտդ բերեց, որովհետեւ քո առջեւ, այնուամենայնիվ, Հայոց բանակն էր, որից, ինչքան էլ բարոյալքել եք, չեք կարողացել խլել արժանապատվությունը:

Դե իսկ Սուրոյի շեֆը պիտի ճառեր ու ցուցադրեր պաշտպանության ոլորտից ու հայոց պատմությունից իր՝ կիլոմետրերով հեռու լինելու հանգամանքը: Նրա ճառից այդպես էլ ոչ ոք չհասկացավ, թե ինչու էին զորքը բերել հրապարակ: Դեմ չեմ, որ պատերազմում պարտված երկիրը տարիներ անց զորահանդես անի, իր ժողովրդին ու թշնամիներին ցույց տա, որ վերականգնվել է, լուծել պաշտպանության խնդիրները, զինվել, պատրաստվել պատերազմի՝ կորուստները հետ բերելու համար: Բայց ի՞նչ ցույց տվեցին մեզ… Մի անկապ ելույթ, մի քանի հնդկական ու ֆրանսիական պարսատիկ, 6 հատ կվադրոբեր ռոբոտ, զինվորական «ավտոբուսներ», ռուսական ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ: Լավ, ցույց տվեցին, իսկ ո՞րն էր այդ ամենը ցույց տալու նպատակը: Մի՞թե Նիկոլ Փաշինյանն իսկապես ուզեցավ ցույց տալ, թե ինչի վրա է ծախսել համաշխարհային ֆինանսական կենտրոններից հավելյալ վերցրած 8.5 միլիարդ դոլարը: Ասել էր, չէ՞, զենք եմ առել: Մենք տեսանք այդ զենքը, մեզ որեւէ փաստաթուղթ ցույց տվեցի՞ն զենքի գնման կամ զենքի գների մասին: Եվ, ուրեմն, կարող ենք հանգիստ խղճով ասել, որ Նիկոլը մեզ այդ հարցում էլ «ֆռռացրեց»՝ 8.5 միլիարդը լափել են՝ առանց որեւէ հաշվետվության:

Կարող եք ասել, որ Նիկոլ Փաշինյանն ու Պապիկյան Սուրոն մայիսի 28-ին ընդամենը Հանրապետության օրն էին նշում, ի՜նչ զենք, ի՜նչ բան… Արագածի մակետին էլ գրված էր՝ «Հանրապետության օր»: Այդ դեպքում բարի եղեք ասել, թե ինչ գործ ուներ Արագած լեռան մակետը Հանրապետության հրապարակում: Ես չունեմ այդ հարցի պատասխանը, որովհետեւ Նիկոլի՝ Արարատը մերժելու մտագարություններն այլ կերպ, քան Թուրքիային դուր գալ, չեմ ընկալում: Վստահ եմ՝ Հայոց բանակը եւս չի հասկանում, թե ինչու են իրենից խլում Արարատի պատկերը: Կարելի էր, չէ՞, գոնե զորահանդեսին Նիկոլի քարոզ չանել ու «Արագած» կոչվող այդ կույտը չբերել հրապարակ: Թող կանգնեին մեծ եռագույնի ֆոնին…

ՀԳ. *Հունիսի 7-ից հետո լիքը գործ կա անելու: Հայոց բանակը Փաշինյան Նիկոլից եւ Պապիկյան Սուրոյից ազատագրելը պետք է հռչակել առաջնահերթություն, իսկ հաջորդիվ պետք է հետամուտ լինել 8.5 միլիարդի ճակատագիրը պարզելուն:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԷՇ, ՄԻ՛ ՍԱՏԿԻ, ԳԱՐՈՒՆ ԿԳԱ, ՅՈՆՋԱ ԿՈՒՏԵՍ

Ռուսը մեզ ասում է՝ եթե ինձ հետ թշնամանաք, ձեր կոնյակն ու գյուղմթերքը ձեզ կմնան, չեք իմանա, թե ինչ անեք դրանց հետ: Նիկոլը պատասխանում է՝ մենք կհարստանանք: Թե ինչով կամ ինչպես՝ չի մանրամասնում: Եթե հույսը «Թրիփփ» անվանված «Զանգեզուրի միջանցքն» է, ապա այն, նախ, դեռ պետք է ապահովվի ենթակառուցվածքով, ինչը նույնիսկ մեկ տարում չի ավարտվի: Երկրորդ. պարզ չէ, թե որքան են կազմելու ադրբեջանցիներին հատկացված անխոչընդոտ ճանապարհից ստացված եկամուտները: Որպեսզի սկզբում վերադառնան կատարված ծախսերը, իսկ այնուհետ դրա գեներացրած շահույթի հայաստանյան բաժինը՝ 26 տոկոսը, լուրջ գումար կազմի: Երրորդ. գումարը գնալու է պետբյուջե, ոչ թե գյուղացիների կամ վարորդների եւ կամ փոքր ու միջին ձեռնարկատերերի գրպանը, որոնք, բնականաբար, կսնանկանան Լարս հասցրած, ինչ-որ ժամանակ այնտեղ մնացած ու հետ վերադարձած գյուղմթերքի կորստի (փչանալու) արդյունքում:

Անցնենք հայկական կոնյակին: Կոնյակի 2024 թ. (ամենաբարձր ցուցանիշներով տարին) արտահանման ծավալը կազմել է շուրջ 31.5 միլիոն լիտր, դրամական արտահայտությամբ՝ մոտ 258 միլիոն դոլար: Դա կազմում է կոնյակի ռուսական ներկրողի շուկայի մոտ կեսը, իսկ մեր կոնյակի արտահանման ընդհանուր ծավալի շուրջ 83%-ը: Այսինքն, այլ շուկաների բաժինը կազմել է ընդամենը 17%: Ի դեպ, 2023-ին արտահանվել էր 16.4 միլիոն լիտր կոնյակ՝ 191.7 միլիոն դոլարով: Ինչպես տեսնում ենք, 2024-ին գումարային աճը կազմել է 34.5%:

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, հայկական ծագման ալկոհոլային խմիչքների եւ սպիրտի արտահանումը Ռուսաստան 2025 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 284.2 միլիոն դոլար, որի առյուծի բաժինը կոնյակն է: Սակայն տարեվերջին իրավիճակ է փոխվել: Թե ինչքան է կազմել տարվա կտրվածքով՝ դեռ հայտնի չէ, սակայն եթե պահպանված լինի նախորդ տարվա մակարդակը, արդեն կարելի է հաջողություն համարել: ՀՀ գործող իշխանության եվրոպական ձգտումների ֆոնին 2026-ին իրավիճակը վատացել է:

Ռուսաստանյան համապատասխան կառույցները որոշել են ժամանակավորապես կասեցնել ալկոհոլի, այդ թվում՝ կոնյակի, նաեւ՝ հանքային ջրի արտահանումը. որոշ տեսակներում խաղողի սպիրտների եւ ԳՈՍՏ-ի պահանջներին համապատասխանության առումով տեսել են լուրջ խնդիրներ: Պարզ է, որ դրանց հիմքում ոչ այնքան որակի, որքան քաղաքական խնդիրներ են, ինչի մասին արդեն երկար ժամանակ է խոսվում: Ինչպես տեսնում ենք, Փաշինյան Նիկոլի կառավարության իբրեւ թե բալանսավորված քաղաքականության արդյունքում տուժում է ՀՀ տնտեսության մի հատվածը՝ գյուղացիներ, փոքր ու միջին ձեռնարկատերեր, բեռնափոխադրող ընկերություններ, ֆուռերի վարորդներ:

Իսկ ի՞նչ ենք փոխարենը ստանում Եվրամիությունից: Ընդամենը վիզայի ազատականացման խոստումներ եւ վարչապետի պաշտոնը զբաղեցրած անձի ասելով՝ մաքսատուրքերի առումով ինչ-որ արտոնություններ: Վիզայի ազատականացումը վերը նշված խավերին ոչինչ չի տալու, քանի որ իրենք ո՛չ կարող են դրա շնորհիվ աշխատանք գտնել այնտեղ եւ ո՛չ էլ ապրանք արտահանել եվրոպական երկրներ: Նույնիսկ չեն կարող որպես զբոսաշրջիկ այցելել, ասենք, Վենետիկ՝ սուրճ խմելու: Քանի որ նույնիսկ էժանագին ավիատոմս գնելու պարագայում չեն կարող իրենց թույլ տալ գիշերակացի, սննդի ու սուրճ ըմպելու ծախսերը: Որպես օրինակ՝ այն ժամանակ, երբ ԵՄ-ն տանելի հարաբերություններ ուներ Վրաստանի հետ, նրա 10 հազար քաղաքացիների էին դեպորտ արել՝ Եվրոպայում մնալու կանոնները խախտելու համար: Այսինքն, փորձել էին աշխատանք գտնել:

Ինչ վերաբերում է մաքսային արտոնություններին, ապա դա, նախ, Նիկոլի ասելով է, ինչը կարող է եւ նախընտրական քարոզչության մաս լինել, այսինքն՝ կեղծիք, քանի որ 2018-ից այս կողմ մենք նրանից որեւէ ճշմարիտ խոսք չենք լսել: Իսկ եթե դա նույնիսկ բացառություն լինի, ապա հայաստանյան արտադրողները դեռ պետք է համապատասխանեն ԵՄ խիստ չափանիշներին, ինչը բարդ գործընթաց է՝ թե՛ որպես ընթացակարգ եւ թե՛ որպես ապրանքի որակի խնդիր: Ի դեպ, 10-ական թվականների ՀՀ վարչապետներից Տիգրան Սարգսյանը սկսեց զբաղվել այդ հարցով, բայց դա այնքան բարդ էր, որ մնաց կիսատ: Նա, հիշեցնեմ, դեմ էր Ռուսաստանի հետ մաքսային միություն կազմելուն, որը հետո վերածվեց ավելի լայն տնտեսական կազմավորման՝ ԵԱՏՄ-ի:

Այնպես որ, կյանքի կկոչվի «Էշ, մի՛ սատկի, գարուն կգա, յոնջա կուտես» արտահայտությունը, ինչն արդեն կվերաբերի հայկական գյուղատնտեսությանը, վերամշակող արդյունաբերությանը եւ բեռնափոխադրող կազմակերպություններին ու ֆուռերի վարորդներին: Դրանից խուսափելու մի ճանապարհ կա միայն. հունիսի 7-ին այցելել ընտրատեղամասեր եւ «ՈՉ» ասել Նիկոլին ու նրա կուսակցությանը՝ քվեարկելով քաղաքական ուժերից համար 3-ի, 7-ի կամ 17-ի համար:

ՀԳ. *Աստանայում անցկացվող ԵԱՏՄ խորհրդի նիստում ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը վստահություն է հայտնել եվրասիական ինտեգրացիայի հետագա զարգացման հարցում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների շահերից ելնելով: Ինչպես երեւում է, Ռուսաստանի ու Հայաստանի շահերն այլեւս չեն համընկնում, այլապես չէին առաջանա վերը նշված խնդիրները:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

90-ականներին գիտեինք, որ կար Արցախ, ունեինք ուժեղ բանակ, հիմա ի՞նչ ունենք

Հրապարակի» զրուցակիցն «Ուժեղ Հայաստան» կուսակցության Գեղարքունիքի մարզի պատգամավորի թեկնածու ***Լուսինե Մարտիրոսյանն*** *է:*

- Դուք ծնվել, մեծացել եք Վարդենիս քաղաքում, քարոզարշավի ընթացքում տարբեր համայնքներ եք այցելում, ինչ խնդիրներ են բարձրացնում գյուղացիները հանդիպումների ժամանակ, եւ ինչ կասեք սահմանների անվտանգության մասին, քանի որ Վարդենիսը սահմանային համայնք է:

- Վարդենիսն ունի 34 գյուղ, որից 9-ը սահմանամերձ են: 2021-22 թվականների ադրբեջանական ագրեսիայից հետո գյուղերից 5-6 կմ հեռավորության վրա կանգնած են ադրբեջանական զինվորներ: Այդ գյուղերում, կարելի է ասել, կյանք չկա, մարդիկ զրկված են տարրական պայմաններից, չունեն քաղաքային տրանսպորտ, անգամ խանութ եւ դեղատուն չունեն: Այդ ամենին ավելացել է մի կարեւորագույն խնդիր՝ գյուղացին կորցրել է իր արոտավայրերը, վարելահողերը: Վախենում են երեխաներին դպրոց տանել, որովհետեւ դպրոցն ադրբեջանցիների նշանառության տակ է: Գիտե՞ք, թե քանի անգամ է եղել, որ նրանք կրակել են, մենք չենք պատասխանել: Այդ գյուղերում ապրում են Սումգայիթից գաղթածները, հիմա նաեւ ավելացել են արցախցիներ: Իրենց մոտ կա գենետիկ հիշողություն: Նրանք տեսել են ջարդ ու պատերազմ, շատ մեծ անհանգստություն կա: Իզուր չենք անընդհատ շեշտում 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին: Ինչո՞ւ են այդ գյուղերում վերանորոգում եւ կառուցում դպրոցներ, մանկապարտեզներ, ինչի՞ համար է դա արվում, եթե, օրինակ, սահմանամերձ գյուղի դպրոցն ունի 20 աշակերտ, բայց կառուցում են դպրոց՝ 200 աշակերտի համար: Մենք վստահ ենք, որ դա խոստացված 300 հազար ադրբեջանցիների վերադարձի հետ է կապված: Ունենք ինֆորմացիա, որ դրանք ուղղակի այն ադրբեջանցիների թոռները չեն, ովքեր 90-ականներից գնացել են, հիմա հետ են գալիս: Ադրբեջանում կա բնակչության մի մասսա՝ 44-օրյա պատերազմի ահաբեկիչները, որոնց Ադրբեջանը վարձել էր պատերազմի ժամանակ, հիմա նրանք ապրում են Ադրբեջանում, կոնկրետ խնդիրներ են առաջացնում Ադրբեջանի բնակիչների համար, եւ այս ծրագրով՝ 300 հազար ադրբեջանցիների մուտքով, իրենք ուղղակի մաքրում են Ադրբեջանն այս ահաբեկիչներից: Եվ դա միանգամից չեն անելու՝ փուլառփուլ են տեղավորելու: Ո՞ր գյուղացին կապրի այդ ահաբեկիչների հետ, բնականաբար, հեռանալու են: Իսկ մեր քաղաքական ուժն իր ծրագրում ընդգրկել է 300 հազար աշխատատեղ եւ ընտրվելուց հետո ընդունելու է «Սաֆարովի կանխարգելման օրենք»: Մենք առաջարկում ենք, որ Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող որեւիցե ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ որպես իրական շահառու, ՀՀ-ում գործունեություն ծավալող, չի կարողանալու ձեռք բերել մեր երկրում որեւէ անշարժ գույք: Նշեմ նաեւ, որ Վարդենիսը տուժած համայնք է, քանի որ Սոթքի ոսկու հանքի մեծ մասը եւս ադրբեջանցիների հսկողության տակ է: Վարդենիսում փակել են անձնագրային բաժանմունքը, Վարդենիսը չունի դիահերձարան, շուտով կօպտիմալացնեն հիվանդանոցները, եւ Գեղարքունիքի մարզում կլինի մեկ մարզային հիվանդանոց: Այսքանից հետո, ինչ եք կարծում՝ ինչի՞ համար են արել այս ամենը: Վարդենիսը դատարկում են ադրբեջանցիների համար, քիչ-քիչ դատարկելով, կհասնեն Սեւան: 2022-ին Ադրբեջանը ռմբակոծեց Սոթքի զինվորական ստորաբաժանումը, մենք այդ ժամանակ ռումբերի պայթյունների տակ էինք, եւ հիշում եմ, թե ինչ արագությամբ հավաքեցինք ու քաղաք տարանք երեխաներին: 90-ականներին ես նույնպես մեծացել եմ ռումբերի պայթյունների տակ: Մութ ու ցուրտ վատ տարիներին զուգահեռ իրականություն կար, որտեղ ազատագրվում էր Արցախը: Արցախի ազատագրման առաջին հրամանատարներից մեկն էլ հայրս է: Մեզ այդ տարիներին դպրոցներում քարոզել են հայրենասիրություն: Հիմա ինչ են անում: Լսած կլինեք՝ փակում են նաեւ Գուրգեն Մարգարյանի անվան դպրոցը: Չկա այդպիսի համայնք, որ զինվոր չի կորցրել, եւ այդ զինվորների անուններով դպրոցներ եւ դասարաններ են անվանակոչվել: Չի բացառվում, որ նույնն անեն նաեւ Վարդենիսի տարածաշրջանում: Ասեն՝ մոռացեք ձեր զոհերին, գերեզմաններից դրոշները հանեք: Փաշինյանի վերընտրվելուց հետո չի բացառվում, որ նա ասի՝ Վարդենիսը դժբախտ, դժգույն քաղաք է, մեզ պե՞տք է, հանձնենք՝ հանգիստ ապրենք, ինչպես արեց Շուշիի դեպքում: Նիկոլ Փաշինյանի այս «խաղաղությունը» շատ ավելի վտանգավոր է, քան այն անհանգստությունը կամ այն պատերազմական վիճակը, որ ունեինք 90-ականներին: Այն ժամանակ մենք գիտեինք, որ կար Արցախ, ունեինք ուժեղ բանակ, հիմա ինչ ունենք: Սա է այն դառը իրականությունը, որի մեջ ապրում ենք: Ես խնդրում եմ բոլոր այն մարդկանց, ովքեր ստիպված են ընտրելու գործող իշխանությանը՝ զուտ իրենց աշխատանքը պահելու համար, մի վախեցեք՝ Սամվել Կարապետյանն արդեն խոսել է այն մասին, որ այն ՔՊ-ական պաշտոնյաները, ովքեր մաքուր ձեռքեր ունեն, աշխատանքից չեն ազատվի:

- Որքան մոտենում է ընտրության օրը, Փաշինյանն ավելի ագրեսիվ է դառնում՝ սպառնում է ընդդիմադիրներին, թե կփակի բանտերում, կխլի ունեցվածքը, անգամ կանանց է վիրավորում:

- Իմ կարծիքով, ինքը միշտ էլ չի փայլել իր կուլտուրայով, մարդկանց հետ շփվելու, հատկապես կանանց հետ շփվելու կուլտուրա չունի: Տեսանք վերջերս, թե նա բժշկուհու հետ ինչպես վարվեց: Ինքս էլ բժշկուհի եմ, անընդունելի էր նրա պահվածքը՝ թեւից բռնել ու թափահարում էր կնոջը: Մեր առաջնորդին են կպնում՝ ասելով, թե ինչու ձեր տղաները չեն զոհվել: Այդ մարդիկ միայն մահ ու արյուն են սիրում: Հիմա այս ջղաձգումները կապված են այն բանի հետ, որ ամեն օր իրեն զեկուցում են այն մասին, թե հարցումներն ինչ են ցույց տալիս: Այդ թվերը նաեւ մենք ենք տեսնում, հետեւաբար, դա արդյունք է նրա, որ օրեցօր իր ռեյտինգն իջնում է: Ամեն օր՝ ուզի, թե չուզի, ինչ-որ վատ բան անում է եւ կորցնում է իր ընտրողների իքս տոկոսը: Մեր առաջնորդ Սամվել Կարապետյանի նպատակն է, որ Հայաստանը հանի այս իրավիճակից: Բոլորն էլ լավ գիտեն Սամվել Կարապետյանի բարեգործությունների մասին, նա միայն «Արագիլ» հիմնադրամին 870 մլն դրամ է փոխանցել, որպեսզի անպտուղ զույգերը երեխաներ ունենան, քանի ծննդատուն ու հիվանդանոց է կառուցել: Մենք խոսում ենք բարգավաճումից, ծաղկեցնելուց, խոսում ենք ծնունդներից, այս իշխանությունը խոսում է մահերից, ասում է՝ ինչո՞ւ չեք զոհվել: Ընտրվելուց հետո մենք գալիս ենք արյունահոսող հայրենիքը վերակառուցելու ու վերանորոգելու: Սամվել Կարապետյանն առաջարկում է՝ 0% հարկ փոքր բիզնեսի համար, 20% ավելի էժան դեղորայք, երաշխավորված մթերում գյուղատնտեսների համար, 20 հազար մատչելի բնակարան՝ պետական աջակցությամբ, բուժաշխատողների եւ ուսուցիչների աշխատավարձի բարձրացում. տարեկան 25%՝ մարզերում, 20%՝ Երեւանում, 0% ծայրահեղ աղքատություն Հայաստանում, անվճար բարձրագույն կրթություն ուսանողների համար:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Եթե տեսնենք, որ ճիշտ կողմնորոշվող ուժ կա, թեկուզ վերջին օրը կարտահայտվենք

«Հրապարակի» զրուցակիցն ԱԻՄ առաջնորդ **Պարույր Հայրիկյանն** է:

- Ընտրական գործընթացներում պատկառելի փորձ ունեք՝ Գխ պատգամավորից մինչեւ երկրի նախագահի թեկնածու: Նախընտրական ընթացիկ փուլում ինչը կառանձնացնեք՝ իբրեւ աննախադեպ երեւույթ, իհարկե՝ չհաշված Փաշինյանի սպառնալից ու ատելությամբ լի խոսույթը:

- Հայաստանյան իրականության ընդհանուր «ավանդույթների» ականատեսն ենք: Ակնառու են, որպես բացառություն, «մրցակիցներից» մեկի սպառնական ելույթները «գործընկերների» հասցեին: Դա ընդհանրապես հարիր չէ ժողովրդավարությանը: Անցյալում էլ ունեցել ենք՝ «մեր դեմ խաղ չկա», «100 տոկոս ստանաք՝ մենք չենք ընդունի» եւ նման ձեւակերպումներ, բայց հաշվեհարդարի նման ոճը նորույթ է: Նորույթ է նաեւ այն, որ ամենակարեւորի՝ ԿՄՍՕ-ի խախտման (Կուսակցությունների մասին սահմանադրական օրենք) եւ սահմանադրափոխման գործընթացի տապալման մասին ասես պայմանավորվել են ու չեն խոսում թե՛ իշխանությունները, թե՛ ընդդիմությունը:

- Ո՞րն է այս փուլում ընդդիմության թիվ մեկ խնդիրը. իշխանություններին տապալելու տրիվիալ հարցը մի կողմ դնենք:

- Ընդդիմության հիմնական հարցը պետք է լիներ իրավիճակի սկզբունքային շտկումը, այն է՝ լավ կամ վատ իշխանավորի իշխանության փոխարեն երկրում քաղաքացիների իշխանության համակարգային ապահովումը, բայց կարծես դրա մասին պատկերացում ունեցող չկա: Միայն Լեւոն Բաղդասարյանն է այդ խնդիրն առաջնահերթություն համարում:

- ԱԻՄ-ը չի մասնակցում ընտրություններին՝ իբրեւ առանձին ուժ, ինչ համակրություններ ունեք մասնակից ուժերի շրջանում: Կա՞ն արժանահավատ ուժեր, թե՞ բոլորը, ինչպես Դուք եք սիրում ասել՝ «ԿԳԲ-ի գործակալներ են»: Այդպես նաեւ Նիկոլն է սկսել ասել:

- ԿԳԲ-ն ընդամենը սատանայի ենթակառույցներից մեկն էր. այն փոխարինվել է սատանային գործիքներով ու գործոններով, որոնցից են մեծամտությունը, աթոռապաշտությունը, եսակենտրոնությունը, նյութապաշտությունը եւ այլն, եւ այլն: Մեր (իմ եւ ԱԻՄ-ի) կեցվածքը հստակ է՝ այն ուժն է վստահելի, որը խոսում է ժողովրդի իշխանությունը երաշխավորող Աստվածատուր ԲԺ համակարգի (խոսքը Հայրիկյանի հեղինակած «Բացարձակ ժողովրդավարության» սահմանադրական նախագծի մասին է՝ խմբ.) ներդրման հրամայականի մասին: Առանց դրա բոլորը նույնանում են: Համակրանքներ ունեմ լավ կին թեկնածուներ ունեցողների նկատմամբ, բայց դա՝ մինչեւ այն պահը, երբ ինքնագովազդը փչացնում է: Գիտեմ, շատերն են սպասում մեր կարծիքին, բայց առանց ԲԺ-ի կարեւորության ընդունման մենք՝ հայերս, մեր պատմական առաքելության շրջանակներից դուրս ենք գալիս եւ դառնում ենք միջակություն: Իսկ դա մեզ համար վտանգավոր է: Եթե տեսնենք, որ ճիշտ կողմնորոշվող ուժ կա, թեկուզ վերջին օրով կարտահայտենք մեր տեսակետը: Իսկ դա շոշափելի տեղաշարժ կարող է առաջացնել:

- Այս խելահեղ քարոզարշավի մեջ սովորական ընտրողն ինչպե՞ս տարբերակի լավը վատից, թացը՝ չորից: Ո՞ւմ եւ հատկապես ինչո՞ւ ընտրի:

- Արդեն անդրադարձել եմ, բայց ավելացնեմ, որ շատ կարեւոր է ինքնորոշման իրավունքը: Այն ուժը, որը հարգում է քաղաքացուն, կաշխատի, որ քաղաքացու ինքնորոշման իրավունքը լիարժեք կայանա: Իսկ դա կարելի է անել միայն համակարգային փոփոխություններով՝ ԲԺ սահմանադրությամբ: Այնպես որ, մի քանի օր էլ կհետեւենք եւ կհասկանանք, թե ում արժե տալ ոչ թե մեր ձայնը, այլ այդ քվեաթերթիկի միջոցով երկրի կառավարման մեր ունեցած մասնաբաժինը:

Արա ԱԼՈՅԱՆ

Բաց նամակ Նիկոլ Փաշինյանին

ՈՃԻՐ ԵՎ ՊԱՏԻԺ

Պարո՛ն: Անկեղծ ասած, չգիտեմ՝ իմաստ ունի՞ Ձեզ գրելը, թե՞ ոչ, կկարդա՞ք, թե՞ ոչ, հետեւություն կանե՞ք, թե՞ ոչ, ետ կկանգնե՞ք Ձեր գահավեժ ընթացքից, թե՞ ոչ: Բայց եթե խոստովանեմ՝ գրեթե վստահ եմ, որ եթե նույնիսկ կարդաք, միեւնույն է, ո՛չ հետեւություն կանեք, ո՛չ էլ կփոխեք Ձեր ընթացքը, որը որքան կործանարար է մեր երկրի ու ժողովրդի համար, առավել կործանարար է հենց Ձեզ համար՝ որպես մարդու: Ձեր բնույթն է այդպիսին. համառ, հաստակող, խոսք ու խորհուրդ անտեսող, սեւեռուն գաղափարի տրված, մեծարժեքության մանիայի եւ անլիարժեքության բարդույթի միջեւ տվայտող եւ դրանց արանքներում սահմռկեցուցիչ արարքներ գործող:

Գիտե՞ք, թե այս վերջին օրերին ինչով եմ զբաղված ես. ջնջում եմ Ձեզ ուղղված նամակիս քննադատական-մեղադրական այն հատվածները, որոնք արդեն հնչեցվել են այլոց կողմից: Եվ պիտի ասեմ, որ եթե այդպես շարունակվի, իմ նամակից բան չի մնա (մի տասը էջ արդեն ջնջել եմ), ինչը որքան ափսոսալի լինի ինձ համար, ուզում եմ հուսալ, որ նույնքան եւ առավել այդպիսին կլինի հենց Ձեզ համար:

Որովհետեւ ես ուզում եմ հօգուտ Ձեզ մի միտք արծարծել, որը, գրեթե վստահ եմ, այլ մեկը չի անի. անգամ եթե նկատի դա, դժվար թե ցանկանա նման բան անել: Ձեզ իրապես օգնել ցանկացողները հիմա շատ քիչ են: Իսկ ինձ այս մոտեցման համար գուցե շատերը նույնիսկ պարսավեն ու դատափետեն կամ հեգնեն ու ծաղրեն: Առաջինները՝ համոզված, որ Դուք արժանի չեք օգնության, երկրորդները՝ վստահ, որ Ձեզ օգնել հնարավոր չէ: Սակայն պիտի խոստովանեմ նաեւ, որ ես դա անում եմ որքան Ձեզ՝ որպես մարդ օգնելու համար, նույնքան եւ գուցե առավել՝ Ձեր ցանած որոմների սերմերն արեւի երես հանելու եւ ծլունակությունից զրկելու, առնվազն՝ տեսանելի դարձնելու համար:

Դուք չարիքի սերմեր եք շաղ տվել եւ դրանք հավաքողների մեջ պիտի լինեք, պարո՛ն, գուցե ամենաառաջին ու ամենակարեւոր հավաքողներից մեկը:

Բազում ու բազմաբնույթ են Ձեզ ուղղված քննադատություններն ու մեղադրանքները: Գուցե դրանց մեջ կան որոշ սուբյեկտիվ տարրեր, բայց հիմնականում, ճնշող մեծամասնությամբ դրանք ճիշտ են, Ձեր բնույթին, գաղափարներին, գործողություններին համապատասխանող, դրանց հետեւություն հանդիսացող:

Հանրահայտ է եւ բազմիցս ու վաղուց է ասվել, որ աշխարհում չկա, գոյություն չունի գաղտնիք: Ամեն ինչ մի օր պարզվում է: Ձեր առումով էլ ամեն ինչ գրեթե պարզ է: Ձեր մետամորֆոզների մեխանիզմն էլ այնքան ակնհայտ է, որ այդ մասին նույնիսկ չարժե խոսել: Բայց գիտե՞ք, թե որն է Ձեր իրական դիմանկարը՝ օձի այն երկու բաց երախները, որ միացնում եւ իբրեւ սրտիկ եք ցույց տալիս: Սակայն եթե ողջ աշխարհին էլ խաբեք, Ձեզ խաբել չեք կարողանա: Չէ, հանկարծ չկասկածեք, թե չեմ հավատում Ձեր այդ կարողությանը: Այդտեղ Դուք երեւի ամենակարող եք: Պարզապես աշխարհի օրենքն է փոքր-ինչ այլ. ինքն իրեն խաբել ուղղակի հնարավոր չէ (Աստծո սիրուն, հանկարծ չկեղծեք, չնենգափոխեք ու ասվածը, Ձեր բնույթի համաձայն, շուռ տաք բոլորովին այլ իմաստ ու ենթատեքստով. խոսքն ինքնախաբեության մասին չէ): Ուստի մնում է ընդամենը մի բան. որ Դուք՝ ինքներդ, ընդունեք Ձեր սխալներն ու մեղքերը, այսինքն՝ նախ ինքներդ Ձեզ, ապա եւ ի լուր աշխարհի խոստովանեք այն, ինչն աշխարհում Դուք ամենից լավ գիտեք: Իսկ ապա փորձեք ուղղել Ձեր սխալներն ու քավել մեղքերը: Ձեր պատիժը, պարոն, անխուսափելի է, ինքներդ գնացեք դրան, դա է միակ ելքն ու փրկությունը: Որովհետեւ մի բան է հարկադիր պատիժը եւ բոլորովին այլ բան՝ կամավոր պատիժը:

2024-ին ես մի «նյութ» էի հրապարակել, որտեղ ինքս ինձ մի ոչ հռետորական հարց էի տվել Ձեր ֆենոմենի մասին: Այն ձեւակերպված էր այսպես. «Ո՞վ է Նիկոլ Փաշինյանը՝ գործակա՞լ, թե՞ քաղաքական Ռասկոլնիկով»:

Ասեմ, որ ես մի կողմ եմ դնում գործակալի կանխավարկածը (թեեւ դրա հետեւանքների վերացումը, պատիժ կրելու իմաստով, նույնպես տեղավորվում է իմ կողմից Ձեզ առաջարկված՝ ռասկոլնիկովյան պատժի մեջ) եւ ուզում եմ ուշադրություն հրավիրել Ձեզ քաղաքական Ռասկոլնիկով կոչելու պատճառների վրա: Ռասկոլնիկովը, որի ազգանունը նշանակում է «Հերձվածող», գիտեք, առաջնորդվում էր այն սեւեռուն գաղափարով, թե մեծ գործ անելու հնարավորություն ունենալու համար մարդը կարող է իրեն «փոքր» ոճիր թույլ տալ: Ճիշտ է, նրա ազդակներում կար ինքնահաստատման լուրջ բարդույթ, սակայն սա էլ անտեսենք, թեեւ սա էլ բնորոշ է Ձեզ: Այսինքն, նա գաղափարախոսական հիմք էր ստեղծել ոճիրը՝ տվյալ դեպքում մարդ սպանելն արդարացնելու եւ իրեն այդ գործողության մղելու համար:

Նմանատիպ մի մոդել էլ Դուք եք ստեղծել եւ առաջնորդվել դրանով: Իսկ դա գերագույն սխալ է, ոճիր ու մեղք, որը մարդ գործում է ոչ միայն մարդկության ու աշխարհի, այլեւ հենց իր դեմ: Ես այդ պատճառով եմ Ձեզ անվանում քաղաքական Ռասկոլնիկով: Նաեւ՝ այն պատճառով, որ, որպես մարդ, ուզում եմ, հույս ունեմ, որ ի վերջո կգնաք նաեւ պատիժ կրելու ճանապարհով եւ դրանով, ինչպես ասացի վերեւում, կհավաքեք Ձեր շաղ տված ոճիրի սերմերը (նայեք Ձեզ շրջապատող մարդկանց. դրանք արդեն այնտեղ պարարտ հող են գտել ու ծիլ տվել):

Ես չեմ ներկայացնի Ձեր գործած ոճիրները, որովհետեւ դրանք անսպառ են, բազում ու բազմաբնույթ: Հրաժարվում եմ նույնիսկ դրանց ոլորտները թվարկելու մտքից, թեեւ դրանք ուղղված են ոչ միայն հայի, հայկականության դեմ, այլեւ ընդհանրապես մարդ արարածի ու մարդկության դեմ (հիշեցնեմ միայն Ցեղասպանության դատը պաշտպանելուց հրաժարվելը եւ դրան հաջորդած Գազայի ցեղասպանությունը. գիտե՞ք, որ կապ կա այս երկուսի միջեւ): Ես, պարոն, իբրեւ մարդ՝ զարհուրում եմ այն ճակատագրից, որ սպասվում է Ձեզ, այն ճակատագրից, որն ինքներդ եք ստեղծել Ձեզ համար:

Երեւելի մարդ Ռուբեն Վարդանյանը Ձեզ համար «ճիճուի 84 հազար տարվա կյանք» կանխատեսեց: Բայց Դուք կարող եք փոխել Ձեր ճակատագիրը: Արել եք ռասկոլնիկովյան առաջին քայլը. ոճիրը գործել եք: Արեք նաեւ երկրորդ քայլը, գնացեք նաեւ պատիժը կրելու: Եվ այդպիսով՝ կանեք Ձեր փրկության առաջին քայլը:

Հիմա, այս նախընտրական քարոզարշավը, որը Դուք ցավալիորեն օգտագործում եք Ձեր ոճիրները խորացնելու եւ բազմապատկելու ասես գիտակցված, նույնիսկ հիվանդագին նպատակադրումով, Դուք՝ ինքներդ, կարող եք վերածել նախախնամության եւ նույնիսկ Աստծո կողմից Ձեզ ընձեռված բացառիկ հնարավորության, գուցե՝ վերջին հնարավորության:

Գտեք այդ հնարավորությունը, օգտվեք դրանից: Ես կարող եմ մի տարբերակ առաջարկել: Օրինակ՝ հրաժարվեք իշխանության համար պայքարելուց, հրապարակն օգտագործեք իրական ճշմարտությունը ճանաչելու եւ ճանաչելի դարձնելու համար եւ գնացեք կամավոր պատժի, պարոն, մեղք եք:

Նաեւ հիշեցնեմ Ձեզ եւս մի բան, որը Դուք դարձյալ բոլորից լավ գիտեք: Դուք անսահման եսամոլ եք, պարոն, ինքնասիրահարված, մեծամտությունից կուրացած, անսխալականության, բացառիկության, երեւի նաեւ մարգարեական կոչվածության խաբկանքով վարակված: Սակայն եթե սթափ տեսանողի հայացքով նայեք, կտեսնեք, որ այդ ամենը Ձեր կյանքի հետագիծը վերածել եւ վերածում է սեւ անցքի, տիեզերական սեւ անցքի:

Բայց ուզո՞ւմ եք պատմության մեջ գոնե մի լուսավոր հետք թողնել, ուզո՞ւմ եք փրկել Ձեր անունը: Հրաժարվեք ներկայիս Նիկոլ Փաշինյանից, ընդունեք, ինքնախոստովանեք, որ սխալ պատկերացումներով ու գաղափարներով եք առաջնորդվել, զղջացեք, ներում հայցեք, Ձեզ չհետեւելու կոչ հղեք ներկա ու գալիք սերունդներին, պատիժ կրելու պատրաստակամություն հայտնեք եւ գուցե ներման արժանանաք, գուցե իսկապես մի լուսավոր հետք թողնեք Ձեր ետեւից եւ գուցե հիշվեք այնպես, ինչպես երեւի դեռ ոչ ոք չի հիշվել պատմության մեջ:

Արեւմուտքի Ձեր գործընկերները Ձեր գործողությունները բնորոշում են իբրեւ «խիզախ արարք»: Այո, Դուք ընդունակ եք անհավատալի թվացող վճռական քայլերի: Բայց ամենամեծ խիզախությունը կլինի այդ կեղծապատիր «խիզախ արարքներից» հրաժարվելը, դրանց դեմ ելնելը, դրանց կործանարար ընթացքը կասեցնելը:

Ձեզ արդեն «սերիական մարդասպան» են անվանում: Այս օրերի Ձեր վարքն ու բարքը ցույց են տալիս, որ Դուք ի վիճակի եք գնալու նաեւ այդ ճանապարհով, դիմել դաժանագույն քայլերի եւ նույնիսկ արյունահեղության: Աստծո սիրուն, հանկարծ չանեք դա, թե չէ կկործանվեք հուր-հավիտյան, պարո՛ն: Գիտե՞ք, թե ինչ երջանկություն է իշխանություն չունենալը եւ սուտ միսիայից ազատագրված լինելը: Գիտե՞ք, թե ինչ երանություն է խաղաղված հոգի ունենալը: Եվ գիտե՞ք, որ քանի դեռ չունեք ներքին խաղաղություն, հնարավոր չէ, որ հասնեք արտաքին խաղաղության: Իսկ Ձեր ներքին խաղաղության մասին խոսելն իսկ ավելորդ է: Չգիտեք: Բայց օրերից մի օր հաստատ կիմանաք: Մոտեցրեք այդ օրը, արեք դա հենց հիմա:

Եվ քանի որ Ձեզ դիմելու անկումն ունեցա, իսկ անկումը, Ձեր օրինակով գիտեք, գահավեժի վերածվելու տիեզերական օրենք է եւ տանում է հաջորդական՝ առավել վատ ու վատթարագույն քայլերի, ես ինձ թույլ եմ տալիս ենթարկվել այդ օրենքին եւ նամակ-առաջարկ-խնդրանք-նախազգուշացում-հորդորս ավարտել Ձեր իսկ խոսքերից մեջբերում անելով. «Ամեն բան կախված է մի մարդուց, եւ այդ մի մարդը դո՛ւ ես», պարո՛ն:

ՀԳ. *Երբ 1994-ին արգելվեց «Երկիր» թերթը, մի շարք թերթեր («Առավոտ», «Ազգ», «Լրագիր», «Մոլորակ» եւն), որպես բողոք եւ լրագրողական համերաշխության նշան, սկսեցին իրենց էջերը տրամադրել «Երկրին»: Եվ պատահել է, որ իմ ու Ձեր ստորագրությամբ հրապարակումները հայտնվել են կողք-կողքի՝ նույն թերթի նույն բացվածքում, բայց հակադիր էջերում: Հիմա լավ չեմ հիշում, թե դա որ թերթում է եղել: Կարծեմ՝ «Լրագիրն» էր, թեեւ ես կուզենայի, որ դա «Մոլորակը» լիներ կամ «Ազգը». գուցե անվան խորհրդի համար: Բայց ես այս դրվագը հիշեցի հիմնականում Ձեզ մի դարձյալ ոչ հռետորական հարց տալու համար. ի՞նչ եք կարծում՝ այն ժամանակ, իբրեւ սկսնակ լրագրող, հնարավո՞ր է, որ անհաջող բառախաղ անելու գայթակղության տրվեիք, ասենք, օրինակ, թե՝ «Դուք Ձեզ հրեշ եք դարձրել, բայց կարող եք նաեւ հրեշտակ դարձնել»: Եվ հավատայիք Ձեր խոսքերին:*

Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՋՈՐԴ ԹԻՐԱԽԸ «ՎԵԴԻ ԱԼԿՈՅԻ» ՄԱՆՎԵԼՆ Է

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Վերին Լարսի անցակետից հետ՝ Հայաստան է վերադարձվել «Վեդի Ալկո» կոմբինատի մեծ ծավալի արտադրանք, որն ուղարկվում էր Ռուսաստան: Սահմանային ստուգումների ընթացքում խմբաքանակը կանգնեցվել է, ինչ-որ մանրմունր խնդիրներ է ռուսական կողմը «մահանա բռնել»: Բայց նպատակը եղել է Նիկոլ Փաշինյանի կողմնակից բիզնեսմենին՝ Մանվել Ղազարյանին «պատժելը»: «Վեդի Ալկոյի Մանվել» անունով գործարարը 2018 թվականի իշխանափոխությունից ի վեր աջակցել է ու մինչ օրս շարունակում է պաշտպանել Նիկոլ Փաշինյանին, չնայած 2018-ից հետո տեղի ունեցած բոլոր իրադարձություններին:

Հիշեցնենք, որ վերջին շրջանում Ռուսաստան հայկական ապրանքների արտահանման ճանապարհին սահմանափակումներ են կիրառվում, մի շարք բեռնափոխադրումներ կանգնեցվում են կամ հետ վերադարձվում Վերին Լարսից: Արդեն արգելվել է ծաղիկի, ելակի, ջերմուկի արտահանումը, կոնյակի որոշ տեսակների: Ակնհայտ է, որ պատճառն Արեւմուտքի ճամփան բռնած, հակառուսական քաղաքականություն վարող Նիկոլ Փաշինյանի դիվանագիտությունն է: Հայ-ռուսական հարաբերությունները հատկապես սրվեցին մայիսի սկզբին կայացած ԵՄ գագաթնաժողովից հետո, որի ժամանակ Ուկրաինայի նախագահ Զելենսկին երեւանյան հարթակից որոշ հայտարարություններ արեց՝ ընդդեմ Ռուսաստանի: Մենք փորձեցինք կապվել «Վեդի Ալկո» ընկերության պատասխանատուների հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

*«Հրապարակի» ընթերցողներին իր խոսքն ասելու ցանկությամբ ինձ դիմեց Լոռու մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժինը շուրջ 20 տարի ղեկավարած **Արամ Ռեւազյանը**:*

ՄԵՑ ՊԵ՞ՏՔ Է ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարդացել եմ «Հրապարակում» քո հոդվածներն ու հարցազրույցները, որտեղ «անխնա» քննադատել ես մշակութային գործիչներին եւ նրանց լռությունը՝ այն համարելով երկրի ապագայի հանդեպ անտարբերություն, գրեթե՝ դավաճանություն: Այդ «ցուցակից» ես ուզում եմ դուրս գալ: Ինչպես երկրում, այնպես էլ մարզում, մշակույթը լիովին անտեր վիճակում է՝ անկառավարելի, արհամարհված: Դրանք անկարեւոր հարցեր չեն, թեեւ այսօր կան ավելի ծանր ու ճակատագրական խնդիրներ: Գլխավոր հարցն այն է, թե առաջիկա հինգ տարիներին ում ենք վստահելու երկրի ղեկը: Արդյո՞ք այդ մարդը կարողանալու է փրկել երկիրը վերահաս կործանումից, որպեսզի հնարավորություն ունենանք վերականգնելու վերջին 8 տարում կորցրած արժեքները՝ կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, արդյունաբերության, մշակույթի ու սպորտի ոլորտներում: Հիշում եմ Նիկոլ Փաշինյանի «ինքնախոստովանական ցուցմունքը». «Մենք փախստականների վերադարձի թեման փակել ենք, ու չեմ թաքցնում՝ երկկողմ ենք փակել»: Ո՞վ չի հիշում, որ Նիկոլն ու Ալիեւը նույնկերպ «երկկողմանի» ճանաչեցին միմյանց տարածքային ամբողջականությունը: Արդյունքում Արցախը հայտարարվեց Ադրբեջանի մաս, իսկ Ալիեւը մինչ օրս խուսափում է իր «փայի» մասին նմանատիպ հայտարարությունից: Հիմա էլ նույն վտանգավոր իրավիճակն է ստեղծվում: Վարչապետ հռչակված մարդը հրաժարվում է արցախահայության վերադարձի իրավունքից, մինչդեռ Ադրբեջանը շարունակում է առաջ մղել «Արեւմտյան Ադրբեջանի» եւ 300 հազար «փախստականների» թեման: Սա է սարսափելին: Իր կարճ խելքով նա, փաստորեն, փակում է Արցախի ժողովրդի վերադարձի թեման՝ հրաժարվելով մեր հայրենիքի մի հատվածից, իսկ նման իրավունք նա չունի ոչ միայն Սահմանադրությամբ, այլեւ՝ ամենապարզ տրամաբանությամբ:

Քարոզարշավի ընթացքում անամոթաբար հող է նախապատրաստում դրա համար՝ ասելով, որ Հայաստանը միայն հայերինը չէ, ժամանակին այստեղ ապրել են օտարներ: Միայն հիմարին պարզ չէ, թե ինչ է խոստացել Նիկոլը Ալիեւին, եւ ինչու է այդքան կարեւոր, որ նա վերընտրվի երրորդ անգամ, ինչը Հայաստանի պատմության մեջ աննախադեպ է լինելու: Գուցե Տիգրանաշենն էլ է «դժգույն», ինչպես Շուշին: Ի՞նչ երաշխիք, որ վաղը դժգույն չի հայտարարելու նաեւ Սյունիքը, Գեղարքունիքը, Արարատը... Ընթերցող, լավ մտածիր մինչեւ հունիսի 7-ը արդյոք քեզ պե՞տք է «սրտիկ անող» իշխանություն, որի օրոք 8 տարի շարունակ միակողմանի զիջումներ են եղել: «Ոնց են հայերն ապրում Վրաստանում, նույնկերպ ադրբեջանցիներն են ապրելու այստեղ»,- ասում է Ալեն Սիմոնյանն ադրբեջանցիների վերադարձի մասին: Ընտրող, արդյոք քեզ պե՞տք է ադրբեջանական շահեր սպասարկող անհայրենիք իշխանություն: Ինձ՝ ոչ: Պատահաբար տեսա մի տեսանյութ, որտեղ Փաշինյանին մոտեցած կինը ներկայացավ. «Երկու զոհ եմ տվել, քեզանից շնորհակալ եմ», եւ պատմեց՝ գնացել է Մեղրիի Ագարակ քաղաք՝ «թոռան հուշատախտակը շնորհավոր անելու»: Ահա, այսպիսի թատերախաղ են բեմադրում հանրության համար՝ մարդը շնորհակալ է, որ զոհեր է ունեցել: Հետո տեղեկություն է հայտնվում, որ Ագարակում նման հուշատախտակ չկա, Ագարակից զոհված պապ ու թոռ չեն եղել: Եվ այս կեղտոտ խաղերի մեջ ներքաշում են հասարակության ամենախոցելի խավերին: Կոտայքի Սարալանջ գյուղում ողբերգական դեպք տեղի ունեցավ. դանակահարվեց ՔՊ-ական մի տղամարդ: Ըստ տեղեկությունների՝ վիճաբանության ընթացքում նա ասել է. «Ով Նիկոլ չընտրի՝ իրա մերը»: Դրանից հետո մեկը վերցրել է դանակն ու ... Եթե սա համապատասխանում է իրականությանը, ապա հերթական ապացույցն է, թե ատելության, բաժանման ու մարդկանց իրար դեմ լարելու քաղաքականությունն ինչի է հասցրել հասարակությանը:

Ընթերցող, գնա՛ ընտրության եւ «ոչ» ասա Ալիեւի ու Էրդողանի հայաստանյան ներկայացուցչի իշխանությանը: Մի՛ բռնիր ինքնաոչնչացման ճանապարհը, որովհետեւ «խաղաղության» անվան տակ քեզ սաֆարովներ են բերում: ԱՄՆ պետքարտուղար Ռուբիոն կես ժամով եկավ Հայաստան: ԱԳ նախարարի հետ կարճ հանդիպումից հետո ստորագրվեցին Ռազմավարական գործընկերության կանոնադրությունը, TRIPP-ի համաձայնագիրը, հազվագյուտ հանքանյութերի արդյունահանման հուշագիրը: Ոմանք այս այցը համարում են ԱՄՆ-ի «գաղութային վարձույթի» հավաքագրում եւ գործող իշխանությանը ցուցաբերած նախընտրական PR աջակցություն՝ համաձայն եմ: Սա ցույց է տալիս, որ Հայաստանը դիտարկվում է որպես հումքային եւ լոգիստիկ կետ՝ «մետաղներ՝ լեգիտիմության դիմաց» սկզբունքով: Հայաստանը պետք է դադարի խաբվել դիվանագիտական պաթոսով եւ հարաբերությունները կառուցի ազգային շահի տրամաբանությամբ: Իսկ այդ պահին 450 բեռնատար կանգնած էր Վերին Լարսում: Ծաղիկի, ելակի, գյուղմթերքի արտահանումը Ռուսաստան արգելվել է: Վաղը գուցե մեր ծիրանն էլ չընդունեն: Ո՞վ է մեղավոր: Հեռուներում փնտրելու կարիք չկա: Նա դեռ նստած է վարչապետական աթոռին եւ մի բան է մտածում՝ ինչպես մնալ իշխանության: Ու որոշել է վարորդական իրավունքը կորցրածներին հնարավորություն տալ 50 հազար դրամ վճարելով՝ նորից վկայական ստանալ: Նման դեպքերի համար են ասում՝ «կեցցե կատուն, որ իր փորի համար մուկ է որսում»: Եվ այս ամենի ֆոնին նրա հիմնական ընդդիմադիր մրցակիցը տնային կալանքի տակ է: Մյուս ընդդիմադիր ուժի երկրորդ համարը կալանավորվեց, իսկ Գագիկ Ծառուկյանը կանգնած է ունեցվածքի բռնագրավման սպառնալիքի առաջ: Եվ «բարձր քաղաքական մշակույթի» մասին խոսող մարդը հրապարակավ գոռում է՝ «ասֆալտին կփռեմ», «բորդյուր լիզել կտամ», «ականջներդ կկտրեմ», «բոմժ կդարձնեմ»: Միաժամանակ երեխաներին քարտեզ ու քաղցրավենիք է բաժանում, սելֆիներ անում, վարչական ռեսուրսով ձայներ «քերում»: Մի խոսքով՝ մեզ արդեն «ծնգլ» է արել: Ի՞նչ անել: Ո՞ւմ ընտրել: Ես վաղուց եմ կատարել իմ ընտրությունը՝ «Ուժեղ Հայաստան», Սամվել Կարապետյան: Մարդ, որի ընտանիքին, մանկավարժ ծնողներին ճանաչում եմ անձամբ: Նրա խոսքը պարզապես խոսք չէ, այլ հայ մարդու, տղամարդու խոսք է, որը վերածվում է գործի: Հավատում եմ, որ Սամվել Կարապետյանը, ապահովելով ժողովրդի միասնությունը, կարող է երկիրը դուրս բերել այս վիճակից, փրկել նիկոլիզմի ախտից եւ տանել շենացման ճանապարհով:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 30.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՆ ԱՆՀԵՏԱՑԵԼ Է ԴԱՏԱԼԵՔՍԻՑ

Երբեմնի ընդդիմադիր, այժմ իշխանության հետ ջերմ հարաբերություններ հաստատած Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի գործը բացակայում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից: Նրա պաշտպան **Սերգեյ Մարաբյանը** մեզ պարզաբանեց. «Եթե դատապարտյալը, մեղադրյալը համաձայն չէ, որ նիստը տեսանկարահանվի, դատարանը չի կարող իր կամքին հակառակ որոշում կայացնել: Քանի որ դա դատական ակտերի կատարման փուլ է, սա «Դատալեքսում» չի երեւում, դատարանում երեւում են գործերը, որոնցով դատավճիռ է կայացվելու, բուն դատաքննությունն է երեւում: Մի միջնորդություն է ներկայացվել, մենք ներկայացրել ենք առարկություն, դատարանը հավելյալ ապացույց է ուզել, որովհետեւ միջնորդությանը կից պակաս փաստաթղթեր են եղել, դատարանը պահանջել է այդ ապացույցները ներկայացնել, որից հետո որոշում կկայացնի: Այն փաստաթղթերն են, որոնք Պրոբացիան չի ներկայացրել: Սա շատ պարզ ընթացակարգ է, այստեղ ընդամենը որոշվում է՝ պատիժը պետք է փոխվի, թե՝ չէ»:

Մինչ այս, Վճռաբեկ դատարանը շուրջ մեկ տարի չի հայտնել իր վերջնական դիրքորոշումը, ինչը պատահական չէ: Չի հաստատել նախկինում կայացված դատական ակտերը, չի ընտրել նաեւ ազատ արձակման տարբերակը, ուղղակի բեկանել է վերաքննիչի որոշումը եւ գործն ուղարկել նոր քննության՝ արձանագրելով ընթացակարգային, այդ թվում՝ ընդդատության խնդիրներ: Այսինքն, գործը վերադարձվել է առաջին ատյան՝ նոր քննության: Պարզ է, որ սա որոշակի մեկնաբանությունների տեղիք է տվել, քանի որ Առուշանյանը վերջին շրջանում շատ սերտորեն շփվում է իշխանության ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանին է դիմավորում, երկտակվելով բարեւում, կողքից քայլում, եւ մարդիկ նրա քաղաքական դիրքորոշման փոփոխությանն են վերագրում քրեական գործի քննության այս ընթացքը: Եվ սա կատարվում է մի երկրում, որի ղեկավարը պարբերաբար հայտարարում է, թե «զանգովի արդարադատությունը» վերացվել է:

Հիշեցնենք, որ այս գործի դատական պատմությունը սկսվում է 2022 թվականից, երբ Սյունիքի մարզի դատարանն Առուշանյանին մասամբ արդարացրել էր ընտրակաշառքի դրվագով, սակայն պաշտոնեական չարաշահման մասով ճանաչել էր մեղավոր եւ նշանակել պայմանական ազատազրկում: Նաեւ սահմանել էր, որ նա իրավունք չունի զբաղեցնել ՏԻՄ ղեկավարի պաշտոն: Ավագանին հրաժարվել էր կատարել այդ պահանջը՝ դադարեցնել Գորիսի համայնքապետի պաշտոնավարումը, եւ Պրոբացիայի ծառայությունը միջնորդություն էր ներկայացրել՝ պատժի խստացման վերաբերյալ, որ նրան ազատազրկման տեսքով պատիժ սահմանվի, եւ պայմանականը փոխարինվել էր իրական ազատազրկմամբ՝ 1 տարի 8 ամիս 3 օր ժամկետով: Պաշտպանական կողմը վճռաբեկ բողոք էր տարել այդ որոշման դեմ, որից հետո սկսվել էին Առուշանյանի կերպափոխումն ու քննության ձգձգումը՝ հօգուտ մեղադրյալի:

Այս պահին գործը գտնվում է Հակակոռուպցիոն դատարանի քննության տիրույթում, որտեղ պետք է կայացվի վերջնական դատական որոշում:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am